

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յեկեղների, միացե՛ք!

== Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ ==

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ



ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՅԵՐԻՏ ՄԻՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ

1923

11
10571ԱԷ

0
116

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1. Հոկտեմբերյան հեղափոխութիւնը աշխատավորութեան—բանվորների և գյուղացիների առաջ բացեց ամենալայն հնարավորութիւն իրենց կյանքը նոր հիմունքներով տնօրինելու համար: Բանվորները իրենց տեր զգացին հաստատութիւններում, իրականացավ գյուղացիութեան նպատակը,—նա հող ստացավ: Այդ բոլորը նրանց մեջ ստեղծեցին ձգտումն զեպի գործունեութիւն և չտեսնված յեռանդ արթնացրին նրանց մեջ:

Սակայն, և գյուղացին և բանվորը շատ շուտ զգացին թե ինչպես է կապում նրանց ձեռները և վռտները նրանցում բացակայող ամենատարրական գիտակցութիւնը: Պատերազմը խլաց գյուղին իր հին սովորութիւններից, կապանքներից, բարձրացրեց գյուղացիութեան կշիռը՝ մարդկային կյանքի համար: Նա գիտակցեց, թե ինչպես են գիտութեան նվաճումները, իմացավ թե ինչպես գիտութեան միջոցով կարելի յե նվաճել ամբողջ հողը, հսկայական ուժե հարստութիւն կորզել նրա խորքից: Բանվորը առաջ ել գիտեր այդ:

Հեղափոխութիւնը աշխատավորութեանը տեր դարձրեց կյանքն, արթնացրեց նրանում ձգտումն՝ ոգտագործել գիտութիւնը իր նպատակների համար: Այդ ձգտումը սրեց գյուղացու և բանվորի գիտակցութիւնը զեպի իր ցարգութիւնը, պահանջ արթնացրեց գիտութիւն ձեռք բերելու համար:

Անգամ Խորհրդային իշխանութեան վոչ համակիր մարդիկ մատնանշում են աշխատավորական մասսաների խիստ ձգտումն զեպի կրթութիւնը, վորպիսին արտահայտվում է գլխավորապես բանվորական և գյուղացիական յերիտասարդութեան միջև:

Նույնպեսի բուռն փափակով, ինչպիսով, վոր յերիտասարդութիւնը հրացանը ձեռքին յեղնում եր փողոց և գնում զիրքերը մեռնելու համար,—նա ներկայումս կովում է զրքի համար: «Յես յերբեք չեմ տեսել,—պատմում է Լև Նիկոլայիչ Տոլստոյի դուստր Ալեքսանդրա Լվովնան,—վոր գյուղացիական յերիտասարդութիւնը այդպես անսահման փափակով սովորեր, ինչպես սովորում է այժմ, նրանք յերեկոյից մինչև ուշ զիշեր նստած են զրքերի մոտ»:

Ինչպես է կարգում այն յերիտասարդութիւնը, վորին հա-

Տ Ր Ե Ս Տ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն



11-10571աէ

Նողվել և մտնել վոսե դպրոց, պատմում, որինակ «Նոր Ռուսաստան»-ի 1922 թվի առաջին համարում Յու. Ի. Չառուսեկը «Յերիտասարդություն» հոգվածում։ Նա պատմում է, թե ինչպիսի ձգտում ունի յերիտասարդությունը դեպի ուսումն, ինչպիսի արդեւքներն յե հաղթահարում նա այդ միջոցին, թե ինչպես առնականորեն և կայուն կերպով նա տանում է սովը, մերկությունը և Ֆիզիքական և այլ ծանր կացություն։ Պատմում է թե ինչպես և այդ յերիտասարդությունը ապրում կրմունաներում և վերջին պատասը բաժանում իրար մեջ։

«Ռուս ժողովրդի մեջ, սկսած հազիվ խոսել լիմացողից մինչև ձերունիները, անասելի չափով տարածված է ուսել ցանկանալու անստման ձգտումն,—մենք այդ իմացանք հեղափոխության չորս տարվա ընթացքում» գրում է Չառուսեկը։ Վոչ Ալեքսանդրա Տոլստոյին և վոչ էլ Յու. Չառուսեկին չի կարելի մեղադրել Սորհրդային իշխանության կողմնապահության մեջ, այդ վկայությունը ավելի պահասակի յե նրանց բերանում։

Ինչ ավելին կարելի չի պատմել այն մասին, թե ինչպես են սովորում խորհրդային-կուսակցական գաղտնիների կուրսանաներ կարմիր բանակայինները, բանվորուհիները և գեղջկուհիները։

2. Խորհրդային իշխանությունն ընդառաջ և գնում այդ ձգտման։

Այն ժամանակ, յերբ ցարիզմի որոք, այսպես ասած արտադրոցական գաստիարակությունն սպրում եր իր թշվառ և կես լեզալ գոյությունը՝ Սորհրդային իշխանությունը հատուկ ուշադրություն է դարձնում արտադրոցական կրթության գործին, չինայիլով գումարներ այդ նպատակի համար։

Մնորադիտության լիկվիդացիան ընթացավ արագ թափով, հիմնական մոտավորապես 80.000 խրճիթ-ընթերցարաններ, 30 հազար գրագորան, խորհրդային-կուսակցական գաղտնիների մի ամբողջ ցանց, ակումբներ և այլն։ Ամենալայն չափով ոգտագործից մամուլը, տարվել է նկարչական ազիտացիա, առաջ են տարված մի շարք ազիտկամպանիաներ, կազմակերպել են բոլոր տեսակի բնույթ ունեցող դասընթացներ։ Բազմազանների աշխատանքները գյուղացիության մեջ կրթություն տարածելու գործում՝ Սորհրդային իշխանության 5 ամյա գոյության ընթացքում բավականաչափ տարածվել են և վորոշ հետևանքի հասցրված։

Կարմիր Բանակը նույնպես հզոր միջավայր է հանդիսանում կուլտուրայի համար։

Կարմիր Բանակի միջով անցել է ամբողջ տղամարդ յերիտասարդությունը, և այն յերկու տարին, վոր նա անց է կացնե-

լու նրանում՝ չի կորչում իզուր։ Ամենուրեք կազմակերպված են կարմիր բանակայինների գաղտնիք՝ դանազան պատրաստականության տեր կարմիր բանակայինների համար, — գրադարաններ, ակումբներ, (սովյալ մոմենտում, որինակ գոյություն ունեն մոտ 1.200 կարմիր բանակայինների ակումբներ, վորոնք կենարոնացրել են իրենց շուրջը 6,200 քաղաքական, ընդհանուր-դաստիարակչակ. ն, գյուղատնտեսական և այլ խմբակներ, վորոնց անդամների թիվը անցնում է 13.000-ից)։

Սակալ նշանակություն չի ունեցել նաև արհմիությունների, կիրառիկների և յերիտասարդական միությունների լուսավորական աշխատանքները։

Վորպեսզի հնարավորություն տրվի գյուղացիության և բանվորության բարձրագույն գաղտնիներում ուսանելու՝ նրանց համար հատուկ արտոնություն է սահմանված ունկնդրելու համար և լայնորեն կիրառվում է ստիպենդիանական սկզբունքը։ Թեթևվացված է բանվորության և գյուղացիության յերիտաների ընդունելությունը՝ միջնակարգ գաղտնիներում։ Հիմնված են հատուկ գաղտնիք՝ բանվորների և գյուղացիության համալսարանի համար նախապատրաստելու նպատակով, և արիշ բարձրագույն գաղտնիք, այսպես ասած՝ բանիակներ։

Սակայն, ի հարկն այդ բոլորը բավական չէ, վորպեսզի բավարարվի աշխատավորության առաջադրած պահանջը կրթության դարձում։ Մեղնում, Ռուսաստանում ինքնակրթությունը դեռ յերկար ժամանակ պետք է միանգամայն բացառիկ դեր խաղա։

3. Սակայն, վորպեսզի ինքնադարգացման դորձը հարկ յեղած հետևանքները տա՝ անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես կարգալ, ինչպես լավագույն ձևով կազմակերպել դրադմունքները։

Մենք յուրաքանչյուր ժամ, տեսնում ենք թե ինչպիսի անողնական վիճակում է գտնվում իր մոճից և դազգյանից անջատված գյուղացին, յերբ նա անցնում է իր գիտակցությունը ուժեղացնելու գործին։

Նա չգիտե վոր կողմից մոտենալ, ուսման, ինչ և ինչպես կարգալ, նու չունի ամենատարրական կարողություն, վոր անհրաժեշտ է գրքի հետ դրազվելու համար։ Մի մարդ, վոր հազիվ կարողանում է կարգալ՝ միանդամից վերցնում է Մարքսի «Կապիտալը» կամ պատմական մատերիալիզմի մասին գրված Բուխարինի գրքերից և տեսնում է վոր վոչինչ չի հասկանում։

Ինչ յոտանդ ունեցող և վճռական մարդը ընկնում է հոգեպես և թողնում իր գործը, յերբ տեսնում է, վոր վեր է այն իր ուժերից։

Սակայն նրա ուժերից վեր ե հանդիսանում այն, յերբ Մարքսի ընթերցողը չուեննալով համապատասխան պատրաստութիւնն՝ հեղինակի առաջադրած նյութը տիրապետելու համար, այսպես ասած տուն ե վերադառնում դատարկ ձեռներով:

Մեծ յեռանդ ունեցող և համառ մարդիք կարողանում են հասնել առաջադրած նպատակին, սակայն այդ ընթացքում գործադրում են խոշոր չափով ապարդիուն աշխատանք և պատահում ե, վոր նրանք կտրվում են աշխատանքից:

Որինակ ցույց տանք Սվերդլովի համալսարանը, ուր հոգնածութեան հողի վրա հաճախ առաջանում են հոգեկան հիվանդութիւններ, թոքախտ և այլն:

Կուրսանտները իրոք վատնում են հսկայական յեռանդ, սակայն գործի ոգտակարութեան տեսակետից ստանում են շատ քիչ: Սվերդլովի համալսարանի ուսանողները ակնհայտ են և հաշվի առնված: Ինչպես և ընթանում գործը այն յերիտասարդութեան մոտ, վորը ամբողջովին թողնված ե իր ուժերի կամքին: մենք չենք տեսնում, բայց կարելի յե այնպես ել ասել, վոր դրուզացի և գեղջկուհի յերիտասարդութիւնը զբաղվելով ինքնագարգացմամբ՝ անխնա կերպով լարում ե իր ուժերը:

Ներկայումս մեզ մոտ շատ ե խոսվում և գրվում աշխատանքի կազմակերպման ու արտադրական պրոպականդայի մասին:

Տեյլորը և մի շարք այլ ինժեներներ և մասնագետներ մանրամասնորեն մշակել են այն հարցը, թե ինչպես պետք ե կազմակերպել ֆիզիքական աշխատանքը: Ամբողջ հատորներ են գրված հաստատութիւններում աշխատանքը կազմակերպելու մասին, թե ինչպես պետք ե կառուցվեն մեքենաները արհեստանոցներում, ինչ ստորարածանութիւններ պետք ե ունենան գործիքները, ինչպես պետք ե բաժանվի և դասավորվի աշխատանքը, ինչպես պետք ե հրահանգներ տալ հաշվի առնելով աշխատանքը: Այդ բոլոր հարցերը քննութեան են առնվում այն տեսակետից, թե ինչպես խուսափել ավելորդ ուժ և ժամանակ գործադրելուց:

Հմուտ կերպով կազմակերպված աշխատանքի տեսակետից ավելի լավ և վորակավորյալ բանվորը համարվում ե նա, վորը բոլոր անհրաժեշտ շարժումները կատարում ե նպատակահարմար, արագ, ավելի քիչ ժամանակ և ուժ կորցնելով:

Սակայն, յերբ ֆիզիքական աշխատանքի նկատմամբ անդանդար կերպով մատնանշվում ե այն հանգամանքը, վոր աշխատանքի անսխալ կազմակերպումը խոշոր նշանակութիւն ունի, ապա մտավոր աշխատանքի տեսակետից այդ ակնհայտ ճշմարտութիւնը աչքաթող ե արվում, ըստ վորում այդ հանգա-

մանքը խոշոր նշանակութիւն ունի թե սովորողների և թե նրանց համար, վորոնք հարկադրված են իրենց գիտակցութիւնը լրացնել ինքնակրթութեան միջոցով:

Հենց մտավոր աշխատանքի կազմակերպման ել պետք ե նվիրվի ներկա գրքույկը:

ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Մարդկային գիտակցութեան սահմանը չի կարելի վերջել: Շատ տարիների ընթացքում միլիոնավոր մարդիք անհավատալի չափով գիտակցութիւն են ձեռք բերել հասարակական կյանքի և մարդուն շրջապատող աշխարհի նկատմամբ,— և վոչ վոք չի կարող նվաճել այդ ամբողջ գիտութիւնը, վորին յուրացնելու համար չեք բավի տասնյակ մարդկային կյանք: Սակայն մարդուն անհրաժեշտ չե իմանալ բոլորը: Մարդկային ծով իմացութիւնից մարդուն անհրաժեշտ ե իմանալ այն, ինչ վոր անմիջականորեն վերաբերում ե նրան: Ընչու ե անհրաժեշտ ժամանակակից մարդուն, ասենք թե իմանալ անթիվ, անհամար ծաղիկների անունները, յերբ և ինչ թաղավորներ և արքաներ են ապրել, քանի վորդիներ են ունեցել այդ արքաները, ինչպես են բաժանել իրար մեջ իրենց հարստութիւնը և այլն և այլն: Այդ բոլորը վոչնչով չեն կարող ոգտակար լինել մարդու գործունեութեան համար, չեն կարող ավելի լավ ձևով տնորինել մարդու կյանքը, բացի նրանից, վոր այդ հարցերին նվիրված գրքերի ընթերցանութիւնը կարող են փչացնել նրա աչքերը: Սակայն գոյութիւն ունի բոլորովին այլ տեսակի գիտակցութիւն, մի գիտակցութիւն, վորը մարդուն դարձնում ե ուժեղ, նրան իշխանութիւն ե տալիս բնութեան դեպքերի և արհավիրքների նկատմամբ,— ինչպես ոգտա գործել բնութիւնը և նրա հարստութիւնները, ինչպես վերակազմել մարդկային հասարակութեան ամբողջ կյանքը: Աննվաճելի աստիճանի հասնող իմացութիւնից պետք ե ընտրել այն ինչ վոր ավելի կարեւոր նշանակութիւն ունի ժամանակակից մարդու համար:

2. Մենք ապրում ենք սոցիալական հեղափոխութեան եպոխտում, մի մոմենտ, յերբ հին, կապիտալիստական կարգերը մեռնում և լուծվում են, ու ծնվում կոմունիստական նոր կարգերը: Կապիտալիստական կարգերը յեղել են այնպիսի կարգեր, վորոնք

հիմնված են յեղի շահագործման և հարստահարման վրա, և վորոնք խրվիցին ամբողջ աշխարհը հիմնովին դրդացնող իմպերիա, լիստական պատերազմի մեջ: Իմպերիալիստական պատերազմը իր ամբողջ զարհուրանքով խլից կապիտալիզմից նրա իրեակական քողը, հնարավորութուն տվեց լայն մասսաներին տեսնել կատարվող անարդարութունները և կապիտալիստական կարգերի բոլոր մութ կողմերը: Աշխատավորական մասսաների միտքը ուժեղ կերպով գործում և և հասարակական կյանքի նոր ձևեր և վորոնում: Ռուսաստանը արդեն ձևոնարկել և նոր կյանքի շինարարութեան: Նա անցնում և արտակարգ ծանր պայմաններում: Անկասկած այդ բոլորը հսկայական հետաքրքրութուն և արթնացում գեպի ժամանակակից հարցերը, և մարդիք ձգտում են հասկանալ տեղի ունեցող դեպքերը, իմանալ նրանց միտքը և ի հարկի, ով ցանկանում է գաղափար կազմել ներկայումս տեղի ունեցող դեպքերի մասին, վորոնք խոշոր նշանակություն ունին, նա պետք և կարգա թերթեր, այնպիսի թերթեր, ինչպես որինակ «Искусство»-ն, և վորոնք ի հարկի նրան շատ բանի գիտակ կգարձեն, սակայն հասկանալի չի, վոր թերթերը կհարկադրեն նրա մարքին գործել մի վորոշ ուղղութեամբ, ուղղութուն գարձեն ակնհայտ փաստերի վրա, յեղակետ գտնել հարցի առթիվ, այսինքն գործի էյության մասին հանել այնպիսի յեղբակացութուն, վորպիսին կարող և անն տաղանդավոր և բազմակողմանի գաղափարութեան տեր գասախոսը. — միտքին վորոշ ուղղութուն տալ, գծել հեռանկարներ, յեղք, քննել կարևոր նշանակություն ունեցող հարցեր, սակայն վորպեսզի կարողանալ ձշտորեն լուծել հարցերը՝ անհրաժեշտ և լրացրական ընթերցանութեան գուղընթաց կարգալ ավելի հիմնավորված դրականութուն: Առանց հասկանալու կապիտալիստական կարգերի խորամանկ կատուցվածքը՝ հնարավոր չի հասկանալ նաև ընդհանուր սխտեմի մասնակի յերևույթները: Այդպիսով, նա, ով կամենում և ըմբռնել ընթացիք դեպքերը, պետք և ուսումնասիրել կապիտալիստական կարգերը, նրա ամբողջ սարսկատուրան, կապիտալիստական եկանաժիկայի կապը՝ կապիտալիստական քաղաքականութեան, կապիտալիստական խղիտլոյիայի հետ, հասկանալ կապիտալիստական սխտեմի ներքին հակադրութունները — կապիտալիզմի թշնամի այն ուժերը, վորոնք ծնվում և բարգավաճում են նրա ծոցում: Դրանումն և գտնվում ընթացիք դեպքերի հետ ծանոթանալու բանալին:

3. Մյուս վոչ պակաս կարևոր նշանակություն ունեցող հարցը այն է, թե ուր և գնում մարդկային հասարակութեան գարգացումը: Այդ հարցը չափազանց կենսական է և խոշոր նշանա-

կութուն ունեցող մի հարց է: Կոմունիստները հաստատում են, վոր կապիտալիստական հասարակութունը իր գարգացման վորոշ որենքների ուժով գնում և դեպի կոմունիզմ: Յեթե այդպես և, ապա այն դեպքում միտք չունի դեմ գնալ կոմունիզմին, կարելի չի լավագույն դեպքում կանգնեցնել կոմունիզմի հարձակումը, բայց հետ տալ նրան հնարավոր չի: Յեթե այդ այդպես է, այն դեպքում չեն կարող շփոթութուն անաջացնել ժամանակավոր անհաջողութունները և դատարները: Իսկ ինչպես իմանալ՝ ճիշտ և այդ արդոք, թե վոչ: Պետք և ուսումնասիրել հասարակական դարգացման որենքները, հասկանալ՝ ինչպես և դարգանում մարդկային հասարակութունը, — այն դեպքում պարզ կլինի, թե ուր և գնում նա: Հասարակական գարգացման ավելի ակնհայտ և ավելի հասարակ ձևի որենքները մտնում են նախնական կուլտուրայի պատմութեան մեջ և դրա համար անհրաժեշտ և ուսումնասիրել այն: Սակայն չի կարելի կանգ առնել նախնական կուլտուրայի սահմաններում, պետք և հետագոտել, թե ինչպես հետո գարգացավ հասարակութունը, ինչպես հետագա պատմութեան մեջ յերեան եկան նույն որենքները: Վերջապես անհրաժեշտ և հետագոտել, թե ինչպես նրանք գոյութուն ստացան կապիտալիստական հասարակարգում, այն դեպքում պարզ կլինի, թե ուր և գնում հասարակական գարգացումը:

4. Ինչ, շատ լավ, կասե ընթերցողը, յես շատ լավ հասկանում եմ կապիտալիստական հասարակարգի կատուցվածքը, յես իմանում եմ ուր և գնում հասարակական գարգացումը, ևս գաղափար եմ կազմում շրջապատող կարգերի մասին, սակայն ի՞նչ է իմ գերը այդ բոլորի մեջ: Ե՞նչ և անհատի գերը պատմութեան մեջ, (այսպես և ընդունված յանխանել այն մի խումբ հարցերին, վորոնք ցույց են տալիս, ինչպես և ազդում հասարակութունը մարդու վրա, և վորը տպացուցում է, թե ինչպիսի պայմաններում և ինչ շափով մարդը կարող և անել նրա համար, վորպեսզի այսպես թե այնպես կարողանա ազդել պատմական դեպքերի շղթայի վրա):

Անհրաժեշտ և հասկանալ թե ինչպիսի սերտ կապերով մարդը կապված և միջավայրի հետ, ինչպես և այդ միջավայրը ազդում մարդու հայացքների վրա, նրա ցանկությունների, նրա ամբողջ հոգեբանութեան վրա: Անհրաժեշտ և պարզ հաշիվ ներկայացնել իրեն այն մասին, վոր մարդը լի՛ցելով մթերքը իրեն շրջապատող հասարակական միջավայրի, պետք և այն մասին էլ հաշիվ տա իրեն, վոր մարդը կապված և վոչ միայն ներկայի, այլ և անցյալի հետ: Պետք և ծանոթանալ ժառանգական իրա-

Այս ցիտատի մեջ շատ թանի կա, բայց քիչ հիմնավորումն էնչ և նշանակում «գիրքը արտադրողական աշխատանքների համար և, վոչ թե գիտակցութեան ձևը բերելու»։ Ի՞նչպիսի մարդկային միտք և պարունակում սա յուր մեջ։ Գիրքը հենց ծառայում և գիտակցութեան ձևը բերելու նպատակին, վորը հնարավորութեան կտա աշխատանքը դարձնել ավելի արդյունավետ։ Յեվ հետո, «գիրքը արտադրական աշխատանքների համար և», և վոչ թե վերջնական և կազմակերպված աշխարհահայցք մշակելու համար», ինչպես ասում էլին առաջ։ Դարձյալ ճիշտ չե՞նք Ի՞նչ և աշխարհահայցքը։ Դա այս կամ այն կերպ լուծումն և այն հիմնական հարցերի, վորոնք վորոշում են մեր վերաբերմունքը՝ կյանքը շրջապատող և բնութեան յերևույթների նկատմամբ։ Կարելի՞ չե՞նք արդեօք այդ հիմնական խնդիր, թողնել առանց լուծման թե վոչ։ Ի՞նչ հարկե վոչ, վորովհետև այլապես մենք չենք կարող վոչնչի մասին գաղափար կազմել և խորանալ կյանքի մեջ՝ իր բոլոր կողմերով։ Ի՞նչ և նշանակում «ամբողջական» աշխարհահայցքը։ Դա նշանակում և չափազանց լավ մտածված, այնպիսին, վորի միջոցին բոլոր հիմնական խնդիրների մասին մտածված են պատասխանները, և այդ պատասխանները չեն հակասում իրար, այլ համապատասխան են և իրենցից մի ամբողջութեան են ներկայացնում։ Լավ և արդյունք, թե վատ, յերբ մարդը գաղափար և կազմել բոլոր հիմնական խնդիրների մասին և ինքն ըստ ինքյան հակասութեանների մեջ չի ընկնում։ Լավ և մասնավոր յերբ նա անխալ կերպով կարող և լուծել այդ հարցերը։ Այդ մարդը կլիմանա, թե ինքը ինչու և ինչի համար և զործում, նա կլինի այն, վորին ասում են «գիտակից մարդ»։ Բոլոր հիմքերը կան յենթադրելու, վոր գիտակից մարդու աշխատանքները ավելի արդյունավետ չեն լինելու, քան այն մարդու աշխատանքները, վորը չի հասկանում. թե ինչու և ինչի համար։ Սակայն արտեղ չպիտի ասել, վոր իր համար ուղիղ աշխարհահայցք մշակելու հոգսերը, ինչ վոր վոչ կենսական և վոչ որինական են։ Ըստ ամենայնի, յուրաքանչյուր կոմունիստ աշխատում և լինել լավ մարքսիստ, մատերիալիստական աշխարհահայցքի համողված կողմնակիցը։ Նա ի նկատի չե՞նք ամենում վոր դա կարող և ողնել նրան գործելու ավելի նպատակահարմար, հետևապես ավելի արդյունավետ։ Մի բանում արդարացի չե՞նք. Նեակին, դա այն և, վոր պետք և գիրքը դարձնել մանդատի և մուրճի ծառան։ Ինչ վոր ճիշտ և, ճիշտ և, Յեթի ընկ. Նեակին կամեցել և ասել, վոր զրքի ընթերցումը չպետք և արարդյուն գործ լինի, այլ ծառայի աշխատարքին, մարդու աշխատանքային գոր-

ծուենյության,— դա միանգամայն ճիշտ միտք և, բայց պետք էր, վոր նա ճշտորեն ձեռնարկվեր։

ԻՆՁՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԱՆՆՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԸ

1. Ինքնակրթութեամբ զբաղվող մարդու համար չափազանց մեծ նշանակութեան ունի, թե ինչից սկսել և ինչ կարգով կարգալ։ Ի՞նչ հարկե պետք և ընտրել այնպիսի գրքեր, վորոնք համապատասխան լինեն ուժերին, թե ըստ բովանդակութեան և թե լեզվի տեսակետից։ Ինքն ըստ ինքյան տարրական մատեմատիկան, փիլիսոփայութեան մասին գաղափար չունեցող մարդը չի կարող կարգալ Հեգել և այլն։ Բայց հարցը միայն զբանուծ չե։ Յերբ մարդը ձեռքն և վերցնում այնպիսի հարցի վերաբերյալ մի գիրք, վորի մասին նա յերբեք չի մտածել և չգիտե, ինչպիսի կապ ստեղծել իր մտավոր պաշարի հետ, ինչպես կազմել ամբողջ կյանքի հետ, նման գեղքում զբքի ընթերցումը նրան միանգամայն քիչ բան կտա։ Ուրիշ բան և, յերբ զրքի բովանդակութեանը կազմված և մարդու մտքերին,— այն նյութի մասին՝ նա պատասխանում և, ինչպես ասվում է— արվող հարցումն ինքին։ Կերչառակեմ մի անձնական հիշողութեան։ Այդ վաղուց և պատահել, մոտ 30 տարի առաջ։ Չնայած յես վերջացրել էլի գիմնադրան, սակայն յերբեք չե՞լի լսել, (այն ժամանակներում զբանում վոչ մի խորամտութեան չկար) վոր յերկրիս յերեսին գոյութեան ունի այնպիսի գիտութեան, ինչպիսին և քաղաքաանտեսութեանը։

Մի անգամ իմ ծանոթ կանանցից մեկը բերեց ինձ յիմանյուկովի գիրքը՝ քաղաքաանտեսութեան մասին՝ ջերմորեն խնդրելով կարդալ այն։ Այդ գիրքը պատկանում էր հրատարակախոսական գրքերի թվին,— ըստ բովանդակութեան և ըստ լեզվի միանգամայն մաշելի էր ինձ։ Յես սկսեցի կարդալ։ Յերկար ժամանակ զբաղվեցի զբանով, հազիվ կարողացա վերջացնել և այդ զրքի ընթերցումից վոչինչ չմնաց ինձ, իսկ մի քանի ամիս հետո հետո, յերբ յես սկսեցի մասնակցել խմբակներին, և ինձ համար պարզվեց, թե ինչու չե՞նք անհրաժեշտ ինձ համար իմանալ տնտեսագիտութեանը յես սկսեցի կարդալ Մարքսը, համեմատած կարճ ժամանակամիջոցում և մեծ հետաքրքրութեամբ կարդացի կապիտալի առաջին հատորը, և այդ ընթերցումը չափից զուրաշատ բան տվեց ինձ։ Հրատարակախոսական փոքրիկ գիրքը ինձ ավելի զժվար թված քան հաստ և գիտական գիրքը։

Վորեկ ատարկայով հմայված ապականավոր դասախոսը, տաղանդավոր մանկավարժը կարող են լսողի, կուրսանտի բուռն հետաքրքրութունը առաջացնել տվյալ նյութի նկատմամբ, կարող յեն հարկադրել նրանց մտածելու այդ ուղղութիւնով, և նրանց հետաքրքրութունն յեն արթնեցնում տվյալ հարցի նկատմամբ: Հաճախ դասախոսութիւնը կարող է լինել, վոչ այնքան հետաքրքրական, և վոչ էլ խորիմաստ, բայց յերբ նա հարվա-վածում է լսողի մտքին՝ նրա մեջ առաջանում է վորոշ հարցում,— արժեքավոր և նյութը: Առաջներում գրականութիւնն առաջավոր դասատուները գրականութիւնը սգտագործում էին նրա համար, վորպէսզի կարողանան արթնացնել աշակերտի միտքը: Միտինդներում դա կարող է անել ճառախոսը: Շատ հանգամանքներ են ոգնում նոր հարցեր առաջացնելուն, նոր հետաքրքրութիւններ արթնացնելուն, վորոնք են՝ զրույցներ ընկերների հետ, ընկերներով միասին զանազան հարցեր քննելը և այլն: Ահա թե ինչու է հետաքրքիր հավաքական, դասարանական կամ խմբակային աշխատանքը,—նա առաջ է մղում ավելի մեծ թափով:

2. Մանրամասնորեն կանգ առնենք Հետաբերութեան հարցի նկատմամբ:

Հետաքրքրութիւնը շատ տարբեր է զանազան մարդկանց մեջ, մեկը ամենից շատ հետաքրքրվում է հասարակական կյանքին վերաբերող հարցերով, մյուսը տեխնիկայի, մի այլ մարդ գեղարվեստի հարցերով և այլն: Մեծ տարբերութիւն կա—պարագան է մարդը հարկադրելով իրեն զբաղվել տվյալ նյութով, թե նա տարվելով այդ առարկայով զբաղմուքի միջոցին, այսպէս ասած զլիսովին թաղվում է նրա մեջ: Հետեանքները այս կամ այն դեպքում բոլորովին տարբեր են լինում: Մենք գիտենք որինակ, թե վորքան զժվար է յերեխայի համար սովորելը, յերբ վորեկ բան զբաղվում է նրա ուշադրութիւնը:

Ինչո՞ւ եր Պուշկինը վատ սովորումն, միթե նրա համար, վոր նա ծուլեր է անգործ ընդհանրապես: Ի հարկէ վոչ: Վատ եր սովորում, վորոհեակ նրա ամբողջ հետաքրքրութիւնը կայանում եր պոեզիայում, իսկ այն ինչ վոր չեր վերաբերում պոեզիային նրան քիչ եր հետաքրքրում: Ահա ինչպէս և Պուշկինը նկարագրում բանաստեղծի արամադրութիւնը՝ այն ժամանակ յերբ բանաստեղծը գտնվում է պոեզիայի սահմաններից դուրս, և յերբ բանաստեղծի հոգում հետաքրքրութիւն և առաջանում վորեկ յերկուսի նկատմամբ:

Չե հնչում նրա քնարըն վոգելից,
ցուրտ թմբութիւն և հոգին ճաշակում

յիվ, գուցե, չնչին շատ եյակներէից
ամենից չնչին նա է աշխարհում:
Բայց հենց հասնում է բարբառն յերկնային
յերգչի ականջին արթուն հուշազգաց,
ցնցվում է իսկույն պոետի հոգին,
վորպէս մի արծիվ քնից արթնացած:
Այն, ինչ վոր Պուշկինը այլաբանորեն անվանում է «բառ-բառն յերկնային» հենց դա հետաքրքրութիւնն է:

Այն հոգեկան վիճակը, վորը Պուշկինը նկարագրում է բանաստեղծի նկատմամբ, կարելի չէ վերագրել յուրաքանչյուր մարդու, վորի մեջ գոյութիւն ունի այսպէս փայլուն կերպով արտահայտված, խորը արմատացած հետաքրքրութիւն վորեկ յերկուսի նկատմամբ: Վերցնենք որինակ, մի բժիշկ, վորը ինքնամոռացութիւնն աստիճան հափշտակված է իր գործով:

Սովորական կյանքում նրա հոգին անընդհատ և իրար հետեից ցցարդ թմբութիւն է ճաշակում», նա անտարբեր և սառնասրտութիւնով է վերաբերվում իր շրջապատին, բայց յերբ բանը հասնում է նրա մասնագիտութիւն, նրա հոգին դարձյալ ամեն անգամ «ցնցվում է, վորպէս մեկ արծիվ արթնացած»: Հետեանք մարդկանց, նրանցից մեծամասնութիւնը ունի իր մտաշխարհը, վորը առանձնապէս հետաքրքրում է նրանց:

Մեկի մեջ այդ աշխարհը չափազանց լայն է,—վերցնենք որինակ մարդկային կյանքի վերաշինման հարցը, մի ուրիշի մեջ—հրդեհի գործը, մի յերբորդի մեջ—սեփական յերեխան և այլն: Հատուկ հետաքրքրութիւն և առաջանում չափազանց խորը ապրում ունենալու հետեանքով, հաճախ շատ հեռուներից: Յեա ճանաչում եմ մեկին, վոր մասնագետ եր հրդեհաշիջական գործում, և յերբ 10 տարեկան եր՝ ներկա եր գտնվել մի մեծ հրդեհի, վորը խիստ տպավորութիւն է թողել նրա վրա: Առանձնապէս զարմացնում եր նրան հրդեհաշիջակների աշխատանքը: Նա տանը պատմում է հրդեհի մասին՝ ամենաանհավատալի գուշներով նկարագրելով դեպքը, յերեկայութիւնը գործում եր ամեն ուղղութիւնով:

Իրանից հետո անցավ յերկար ժամանակ, դպրոցական հոգ-նեցուցիչ և անհետաքրքիր տարիներ, փոքրիկ աստիճանավորի կյանքը, և նրա միակ հանգստութիւնը յեղավ այն, յերբ նա կամավոր մտավ փոքրիկ քաղաքի հրդեհաշիջակների խմբի մեջ:

Պոեզիայով լի հեքիաթները զայսակի, նրանց հետ կապված խոր ապրումները վորոշում են Պուշկինի գործունեութիւնն ուղ-ղութիւնը:

Յուրաքանչյուր անգամ, յերբ փնտռում ենք թե վորտեղից և ծագել հատուկ հետաքրքրությունը, մենք գտնում ենք անցյալում; յերբեմն հեռվում խորը ապրումներ, այսինքն այնպիսի ապրումներ, վորոնք գրավել են զգայմունքների ամբողջ աշխարհը:

Հետաքրքրությունը հնարավորությունն է տալիս ավյալ շերտանում ապահովելու ակամա ուշադրությունը: Ուշադրությունը լինելում է կամա և ակամա կամա ուշադրությունը մենք կարող ենք պահպանել շատ կարճ ժամանակով, հետո կրկին և կրկին պետք է աշխատել, վորպեսզի պահպանենք այն: Ակամա ուշադրությունը չի պահանջում վորեւէ կամքի ուժ, նա բացի այդ ավելի լի յե և խորը Պատմությանը վոչ մի հետաքրքրությունն ցույց չտվող աշակերտին չափադանց դժվար և կենտրոնացնել իր ուշադրությունը ուսուցչի ավանդ բացատրություններին կամ մամր, նրա մտքերը անդադար թափառում են մի այլ կողմ, ուշադրությունը ցրվում է, և նա պետք է նորից ու նորից բարե իրեն, վորի համար քիչ ուժ չի փաստվում:

Իսկ յի՞թե աշակերտին հետաքրքրում է պատմությունը՝ նա առանց վորեւէ ուժ գործադրելու հեռեւում է ուսուցչի խոսքերին: Մարդը վոքան շուտ կարողանա կենտրոնացնել իր ուշադրությունը միևնույն առարկայի նկատմամբ — այնքան շատ նա հրնարավորություն կունենա ամբողջությամբ արբապետելու ավյալ նյութը: Աղքատ գիտակցության տեր, անշարժ, վոչ որդինալ մարդը ի վիճակի չէ յերկար ժամանակ իր ուշադրությունը կենտրոնացնել մի առարկայի շուրջը, նրա հետաքրքրությունը առարկայի նկատմամբ խակույն թափանում է: Ընդհակառակն, իսկ յի ուժը կաշանում է հենց նրանում, վոր մարդը շնորհիվ իր պատրաստակամության, թարմության և հորջին մտանալու որինակելիության՝ նորից ու նորից իր ուշադրությունը կենտրոնացնում է ավյալ նյութի շուրջը, արաշտպանում իր ուշադրությունը:

Այն փաստերը և առարկաները, վորոնց նկատմամբ լարված է ուշադրությունը՝ ավելի լավ և պահպանվում հիշողության մեջ: Նշանավոր գիտնական Պատերը հիշում էր խոշոր քանակությամբ բոլոր տեսակի փաստեր և մանր-մունր հիշողություններ, վորոք վորեւէ հարաբերության ունին բացիլների գիտության հետ, բայց նա ամբողջ կշանքում չկարողացավ հիշել յերկուցյան աղոթքները, վորոնք նա ամեն օր յերեկոնները կրկնում էր կնոջ հետ միասին:

«Մարդկանց մեծ մասը արբապետում է լավ հիշողության

այն փաստերի համար, վորոնք առնչություն ունին իրանց հրեական նպատակների հետ»:

Առլետական ընդունակություն ունեցող դպրոցականը չափազանց բուժ լինելով իր դպրոցական սրարապմունքների մեջ՝ կզարմացնի ձեզ առլետների գործունեության հետ կապված փաստերի հիշողություններով և կը գերազանցի սպորտի մասին կազմված վիճակագրական գրքույկներից: Իրա պատճառը հանդիսանում է այն հանգամանքը, վոր նա մշտապես մտածում է իր սիրած առարկայի մասին, հավաքում է նրա հետ կապ ունեցող փաստերը և դասավորում է նրանց վորոշ աստիճաններով: Նրանք կազմում են նրա համար վոչ թե անկարգ խոսնուրդ, այլ հիշողությունների սիստեմ, — ահա այս չափով նա տիրապետում է հիշված փաստերին: Այսպես էլ վաճառականը ճշտորեն իմանում է ապրանքների գներ, քաղաքական գործիչը — ճառերը և իր կողիդանների քվեարկության հետևանքները՝ այնպիսի խոշոր չափով, վոր կողմնակի դիտողը չի կարող չզարմանալ այդ հարուստ հիշողության համար, — սակայն այդ հարստությունը դառնում է միանգամայն հասկանալի, յի՞թե մենք ուշադրության առնենք թե յուրաքանչյուր մասնագետ ինչ չափով է խորհում իր առարկայի նկատմամբ:

Շատ կարելի յե, վոր այն ապշեցուցիչ հիշողությունները, վոր Իսրայիլը և Սպենսերը հայտնաբերել էյին իրենց գրվածքներում՝ կապված են յերկու դիտնակաճանների մտքի Ֆիզոլոգիական յուրացման միջին աստիճանին: Յերբ մարդը տակավին յերիտասարդ հասակից նվիրում է իր մտքերը եվոլյուցիայի (զարգացման) թեորիան փյաստորեն հիմնավորելու, ապա համապատասխան նյութը արագորեն փորվում և կայուն կերպով պաշտպանվում է:

Փաստերը պետք է կապվին իրար միջև թեորիայի նկատմամբ, իսկ վարքան միտքը ի վիճակի կլինի զանազանելու նրանց, այնքան ընդարձակ կլինի դիտնականի մտավոր կարողությանց սահմանները: Ըստ վորում տեսաբանները կարող են արբապետել չափազանց թույլ կարված հիշողության, կամ նույն իսկ բոլորովին չարբապետել նրան իր նպատակների համար վոչ մի առնչություն չունեցող փաստերով չհետաքրքրվող տեսաբանը կարող է բոլորովին չզբաղվել և մոռանալ նրանց անմիջապես:

Հետաքրքրությունը պաշտպանում է ակամա ուշադրություն, ուշադրությունը պաշտպանում է իր ուշադրությունը:

Այդ բոլորը ցույց տալով ինչ խոշոր գեր է խաղում հետաքրքրությունը: Այն ինչն էր արապմունքների համար

11 - 10574 ախ



նյութեր ընտրելու միջոցին պետք է նրանց հիմքում գնել այն, վորը ավելի շատ է հետաքրքրում, և վորի ուղղութեամբ ամենից շատ է ձգտում հոգին: Մեկի համար այդ կարող է լինել հասարակական յերևույթները, մյուսի համար տեխնիքան, մի յերրորդի համար գեղարվեստը և այլն:

Այնուամենայնիվ հիմք ընդունելով գիտութեան այս կամ այն ճյուղը՝ բնավ չի նշանակում, վոր մարդը կենտրոնացնելով իր ուշադրութեանը այս կամ այն ուղղութեամբ՝ չպետք է և պարտավոր ել չէ նայելու ուրիշ կողմերը: Ընդհակառակը, հարցը ամբողջովին նրանումն է, թե այդ մարդը ինչ վերաբերմունք կունենա դեպի մյուս կողմերը:

Մեր առջև, յենթադրենք սովորականից մեկը հետաքրքրվում է տեխնիկայով, մյուսը—հասարակական գիտութեաններով:

Մեկի կամ մյուսի ուսումնասիրութեան սահմանի մեջ յենթադրենք մտնում է ելեկտրոֆիկացիան: Բայց նրանք զանազան ձևով կմտտենան նրան: Տեխնիկն այդ հարցը պետք է ուսումնասիրի այն տեսակետից, թե ինչպիսի տեխնիկական կահավորումներ են անհրաժեշտ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ ելեկտրոֆիկացիա անցկացնելու համար: Դա կլինի նրա իմացութեան կենտրոնական կետը: Բայց մտածելով ցանցի անհրաժեշտ կահավորման մասին՝ նա նույնպես հետաքրքրվում է, թե ինչպիսի հասարակական պայմաններ կարող են ամենալավ ձևով ոգտակար լինել անհրաժեշտ կահավորումը կյանքում իրականացնելու հարար: Հատուկ հետաքրքրութեանը նրան մղում է հասարակական պայմանները ուսումնասիրելու:

Հասարակական գիտութեաններով հետաքրքրվողը ելեքտրոֆիկացիայի հարցին ամենից առաջ կմտտենա հասարակական կողմով:—Այն է, վոր ելեքտրոֆիկացիան անհրաժեշտ է Խորհրդային կարգերի համար նյութական բազա ստեղծելու նպատակով, սակայն յեթե նա կամենա վորոշել՝ հնարավոր է արդյոք ելեքտրոֆիկացիան Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ կիրառելու, այն դեպքում նա պետք է ծանոթանա այն հագամանքներին, թե ինչ է ելեքտրականութեանը, ինչպես են գործում ելեքտրական մեքենաները և այլն:

Իզուր չէ, վոր մեզանում ելեկտրոֆիկացիայի մասին համարամաշխի գիրք, վորը կարող է ծառայել իբրև ձեռնարկ,—դրել է վոչ թե մի ինժինեը, այլ այնպիսի մի հասարակական գործիչ ինչպիսին է Իվ. Իվ. Ստեպանովը: Այս օրինակի մեջ մենք տեսնում ենք, վոր հետաքրքրութեանը վորոշում է վոչ այնքան ձեռք բերված պատրաստականութեան ընդանդակութեանը, վոր-

քան այդ հարցին վորոշակիորեն մտտենալը, վորոշում է այն բազան, վորի շուրջը պետք է խմբել բոլոր մյուս գիտակցութեանները:

Բոլոր նոր գաղափարները, բոլոր նոր գիտակցութեանները պետք է կապել, «ассимилировать», ինչպես ասում են այն հոգեբանները, վորոնք գիտունին հատուկ մտքի պաշար և գաղափար ունին: Նորը պետք է կապվի հնի հետ, յեթե կարելի չէ այսպես արտահայտվել: Վոչինչ այնպես բավականութեան չի պատճառում—հաստատում է հայտնի հոգեբան Ջեմիսը, ինչպես այն, վոր մտքերով կարողանալ նորը կապել հնին, դիմավորել այն բոլոր նոր յերևույթներին, վորոնք անխնայ կերպով խախտում են մեր պատկերացումները, ջախջախել այն արմատապես.

տանկ այն հին, վաղուց կանգ առած խմբակներին միացնելու՝ մեք ծանոթ յերևույթների շրջանում: Հինը նորի հետ հարաբերութեան մեջ դնելու ձգտումը հանդիսանում է գիտական սխրագործութեան: Նորի վերաբերմունքը դեպի հինը, քանի չի կատարվել ասիմիլյացիան՝ զարմանք է պատճառում: Մենք չենք ձգտում դեպի հետաքրքրութեան, զարմանք չենք արտահայտում այն իրերի նկատմամբ, վորոնք այնքան խոշոր չափով գերադանց են մեր գիտակցութեան համար ըմբռնելի դառնալուց, վոր մենք յերևակայութեան չունենք նրանց պատկերացնելու համար, և միջոցներ վորոնց օգնութեամբ գիտողութեան միջոցով կարողանանք չափել այն: Փիջիացիները, ինչպես պատմում է Դարվինը զարմանում էին տեսնելով փոքրիկ մակուկներ, իսկ մեծ շոգենաֆները նրանց զարմանք չպատճառեցին:

Միայն այն, վորը մեզ դոնե վորոշ չափով հայանի յե, մեք մեջ ցանկութեան է առաջացնում ավելի լայն չափով ըմբռնելու համար: Բոլոր նոր իմացութեանները պետք է կապել սովորող մտքի մեջ կազմված վորևե հետաքրքրութեան հետ, այսինքն, ուրիշ խոսքով, վորևե ճանապարհով այդ իմացութեանը կապել նախապես ձեռք բերված տեղեկութեանների հետ: Այս տեղից է բղխում այն առավելութեանը, վոր ստացվում է հետավոր և խորթը անմիջական փորձով մոտիկի և ծանոթի և ակնհայտնին անհայտի հետ համեմատութեան գնելուց, և յերբ գիտնականը օտարված տեղեկութեանները համեմատում է իր անհատական փորձին:

Յենթադրենք, վոր դասատուն ուզում է իր աշակերտին պատկերացնել հողի հեռավորութեանը արևից: Եթե՛նչ կանխիք դուք,—հարցնում է դասատան աշակերտին,— յեթե վորևե մեկը արևի վրայից կամենար կրակել ուղիղ ձեզ վրա, և ուք կնկա-

տեյիք այն կրակելու բուսելին»։—Յեւ մի կողմ կփախչեյի, պատասխանում ե աշակերտը։ Այն դեպքում ուսուցիչը կարող ե ասել հետեւեալը,— դուք կարիք չունիք մի կողմ փախչելու, դուք կարող եք հանգիստ կերպով պարկել քնելու ձեր սենյակում, հետևյալ որը առավոտյան նորից վեր կենալ, հանգիստ կերպով ապրել մինչև բարձր տարիքը, առևտուր սովորել, հասնել իմ տաքիքիս,—այն ժամանակ միայն գնտակը կսկսե մոտենալ ձեզ, և դուք կարիք կզգաք մի կողմ փախչելու։ Յեվ այսպես տե՛սնում եք թե վորքան հետու ե գտնվում արեք հողից։ (Ձեմս, Հոգեբանություն, յերես 230)։

Նոր գիտակցությունները կապել արդեն փորձով ձեռք բերված գիտակցության հետ, հիմնվել նրանց վրա, ահա այն որքանքը, վորով պետք ե առաջնորդվել նյութի ընտրության ժամանակ։ Հարցը նրանում չե, վոր ձեռք բերել վորքան հնարավոր ե շատ պատրաստակա՞նություն և բոլոր հարցերի նկատմամբ վերածվել հանրամատչելիության։ Կարևորն այն ե, վոր սատիճանաբար խորացնել արդեն յեղած պատրաստակա՞նությունը, վորպեսզի կարելի լինի նոր ձեռք բերած գիտակցությունը կապել հսի՞ն և այդպիսով հիմք ընդունելով հետաքրքրությունը՝ նորից ու նորից ամրապնդել այն։

Կարևորը այն չե, վորպեսզի պատրաստակա՞նություն ձեռք բերվի, այլ այն ե, վոր նրանք կազմակերպված լինին հարկ յեղած ձևով։

Հենց «կրթություն» խոսքը նշանակում ե՝ մարդու ունեցած պատկերացումների հիմնական կորիզի շուրջը համախմբել նոր պատկերացումների մի ամբողջ հյուսվածք, վորոնք սերտորեն կապված են հիմնական կորիզին։

Հասկանալի չե, վոր այն կարգը, վորով գյուղացին գիտակցություն ե ձեռք բերելու՝ լինելու յե բոլորովին այլ քան այն, վորի միջոցով ձեռք ե բերելու բանվորը։ Բոլորովին տարբեր ե մեկի թե մյուսի կյանքի փորձառությունը և գիտակցության շրջանը։ Այդ հանգամանքը հաճախ աչքաթող ե արվում չափահասների համար զանազան տեսակի դպրոցական ծրագրերի մշակելու միջոցին։ Այդ ծրագրերի մեջ չափազանց թույլ չափով ե ի նկատի առնված ունկնդիրներին։ Կարևոր և գլխավորը այն ե, թե ինչ ձևով և կարգով պետք ե գիտակցության այդ նյութը մատուցվի ունկնդիրին։

3. Բոլոր տեսակի նյութերի ուսումնասիրության հիմքում դրված ե գրքի հետ գործ ունենալը։ Մարդկության ժամանակակից կյանքի համար, ժամանակակից կուլտուրայի համար գիրքը

խոշոր նշանակություն ունի։ «Մարդկային կուլտուրան հիմնված ե մի սերունդից մյուսին փոխանցելու և գիտակցության փորձառությունը ավելի խորացնելու վրա»։

Յեթե չլինե՞ր այդ փոխանցումը, յեթե յուրաքանչյուր սերունդ զուրկ լինե՞ր այդ ժառանգությունից՝ այդ դեպքում ամեն ինչ կսկսվե՞ր սկզբից։—մարդկությունը ավելի հեռուն չե՞ր գնա նախնական վայրենությունից։—Սակայն փորձառության և գիտակցության այդ փոխանցումը կատարվում ե գրքի միջոցով։ Հենց գրքի մեջ ե կենտրոնացված գիտակցության ամբողջ կապիտալը, վորը փոխադրվում ե սերնդից-սերունդ, և վորը առավելապես բազմանում ե յուրաքանչյուր սերնդի մոտ, արագորեն աճում ե և հնարավորություն ե տալիս ավելի ու ավելի արագացնելու մարդկային կուլտուրայի առաջխաղացությունը։ (Ա. Ա. Покровский, Библиотечная работа)։

4. Այդ պատճառով անրաժեշտ ե գրքի հետ գործ ունենալ սովորել։

Հարկավոր ե սովորություն դարձնել շատ կարգալ, արագ, ինքն իրեն։ Պիտի աշխատել, վորպեսզի կարգալու մեխանիզմը դառնա միանգամայն ավտոմատիկ և մտքերը չգրավի։

Բայց այդ դեռ քիչ ե։ Հարկավոր ե հաշիվ տալ ինքն իրեն կարգացածի մեջ ևս։ Սա ավելի դժվար ե և պահանջում ե վորոշ զարգացողություն, մտքի հորիզոնի վորոշ լայնություն, բառերի և ըմբռնումների բավականաչափ պաշար։

Կարդացածը ավելի լավ ըմբռնվում ե կարգացողի հոգեկան կարողությունների աճման չափով։ Հարկավոր ե հետևել, հաշիվ տալու ինքն իրեն այն բանում, թե վորն ե հասկանալի, վորը անհասկանալի և աշխատել դուրս հանել անհասկանալի տեղում։ Ոգտավետ ե լինում անհասկանալի կտորը կարգալ յերկրորդ անգամ և հաշիվ տալ իրեն, թե ի՞նչն ե անհասկանալի՝ արտահայտությունը, թե միտքը։ Պիտի փորձել դուրս հանել անհասկանալի տեղերում՝ գիմելով «Բաղաքական բառարանի», «Ենացիկության գիմելում» ոգնությանը, ինչպես և համապատասխան դասագրքի, շոշափված նյութին վերաբերող հանրամատչելի գրքույկի և այլն։ Յերբ անհասկանալի բառի նշանակությունը պարզված ե, ոգտավետ ե արտագրել և հիշել այն ամբողջ Ֆրազան, վորի մեջ այդ բառը գործածված ե, մտածել մի քանի նրման Ֆրազաներ, ուր հարկավոր կլինե՞ր գործածել այդ բառը։ Հարկավոր ե այնպես վարվել, ինչպես այդպիսի դեպքերում վարվում են յերիխաները։ Ինձ վիճակվել ե մի անգամ գիտել մի վեց տարեկան աղջկա, վորը առաջին անգամ լսել ե «վարկենա»

պե՞ս բառը: Հետեյալ կե՞ս ժամկա ընթացքում նա տասը անգամ կրկնում եր այդ բառը՝ զանազան կումբինացիաներով: Վեց տարեկան աղջիկը այդ անում եր անդիտակցականորեն: Անշափահասը կամ հասակավորը պիտի դնա այնպես այդ ճանապարհով, վորպեսզի միանգամայն ընտելանա մինչև այդ ժամանակ ունձանոթ յեղած բառի հետ և սկսի այն գործածել արդեն ավտոմատիկ կերպով, յերբ դրա կարիքը զգացվի: Պետք է միայն հետեւել, վորպեսզի բառի միտքն ու յերանգը ճանկվի ճշտությամբ և չգործածել այն այլ մտքով: Նախկին ժամանակներում այդ հաճախ եր պատահում զարգացած բանվորների հետ, վորոնց վիճակված եր քիչ լսել զրական լեզուն և իրենց կողմից հազվագույն դեպքերում գործածել այն: Կարդալով դրքի մեջ մի բառ և միանգամայն չհասկանալով նրա նշանակութունը, նրանք համարյա թե գործ եյին անում վոչ թե այնպես, ինչպե՞ս ընդունված է, այլ իր՝ մի այլ տեսակի մտքով: Այժմ, յերբ կարելի յե լսել զրական լեզուն միտինգներում, համագումարներում և այլուր, բանվորները սկսել են խոսել ավելի ուղիղ, բայց և այնպես հարկավոր է խուսափել գործածելուց և անձանոթ բառեր, քանի բառը և նրա յերանգավորումը դեռ այնքան ել պարզ չէ:

Իհարկե անձանոթ բառերի և արտահայտութունների պարզաբանման վրա թափած այդպիսի աշխատանքը կարդացողի ուշադրութունը հեռացնում է գլխավորից՝ գրքի մեջ մեկնաբանված հիմնական մտքերի յուրացումից:

Այդ պատճառով պիտի հոգ տանել, շտապ կերպով տիրապետելու զրական լեզվին և նրա հասկանալը զարձնելու ավտոմատիկ:

Անհրաժեշտ է նույնպես սովորել հաշիվ տալ իրեն հակառակ յեղածում: Ամենից լավ է անել այդ վորոշ սխառմայով:

Ամենից առաջ, յերբ կվերջացնես զիրք կարդալը (սկզբում ավելի լավ է այդ բոլորն անել գրքի յուրաքանչյուր գլխինկատմամբ) հարկավոր է, վոր ինքդ քեզ հաշիվ տաս թե ինչ է ցանկացել ասել հեղինակը, ինչ հիմնական մտքեր է նա պաշտպանում իր գրքում, ինչ պատճառաբանութուններ է նա բերում ի պաշտպանութուն այդ հիմնական մտքերի: Շատ կարևոր է պարզորոշ պատկերացնել իրեն՝ հեղինակի մտքի ամբողջ ընթացքը, Կարգացածի ճշգրիտ յուրացումը դա առաջին քայլն է գիրքը դիտակցականորեն կարդալու գործում:

Կարող է պտտահել, վոր առաջին անգամից դժվար լինի յուրացնել հեղինակի ամբողջ ասածը և պետք լինի գիրքը յերկրորդ և յերրորդ անգամ կարդալու: Յերբ ուզում ես հաշիվ տալ

քեզ կարդացածիդ մեջ, պետք է ամեն տեսակի մանր բաների հետևից չընկնել, չաշխատել միտը պահել յուրաքանչյուր բառը, այդ նույն իսկ ֆլատասերը եւ Հարկավոր է աշխատել դուրս քերել ամենաեյականը, հիմնականը: Հետո նայել թե ինչպե՞ս է այդ եյականը և հիմնականը հիմնավորվում մնացած նյութերով: Յերբեմն, հիմնական մտքի լուսաբանման համար հեղինակը բերում է մի շարք փաստեր, յերբեմն ապացուցում է իր միտքը մի ամբողջ շարք դատողութուններով: Ամենից լավն է գիրքը մի ամբողջ շարք դատողութուններով: Ամենից լավն է գիրքը կարդալու ժամանակ քեզ համար գրավոր կերպով կազմես նրա ծրագիրը: Այս բոլորի մեջ հարկավոր է մի լավ փորձվել:

Հետո, հարկավոր է մտածել գրքի բովանդակության մասին: Յեթե հիմնական իդեան լուսաբանվում է փաստերով, այն ժամամտանակ դիտել թե նախ՝ ճշգրիտ են մեկնաբանվում արդյոք նրանք և յերկրորդ՝ բովանդակնաչափ տիպիկ են թե վոչ: Պիտի աշխատեք ինքներդ՝ նման փաստեր հանել, կամ այնպիսի փաստեր, վոր ներհակ են հաղորդածին: Յերբ հեղինակը ապացուցում է իր իդեան մի շարք դատողութուններով, այն ժամանակ հարկավոր է մտածել՝ չի՞ կարելի արդյոք տվյալ դեպքում այլ կերպ դատել և ինչպե՞ս որինակ, հետո մտածած դատողութունը համեմատել հեղինակի դատողության հետ և վորոշել թե վո՞ր դատողութունն է ուղիղը: Պետք է կշռադատել նույնպե՞ս, չի՞ կարելի արդյոք հարցին մոտենալ վորևէ այլ կողմից: Անելով այդ ամբողջ աշխատանքը կարդացողը պիտի յեղրակացութուն հանի՝ համաձայն է նա արդյոք հեղինակի հետ թե վոչ և ինչի՞ մեջ է, վոր համաձայն չէ:

Գիրքը կարդալուց հետո հարկավոր է նրանից քաղվածներ անել, քաղել այն, ինչ կարկավոր է, ցանկալի յե, վոր չմոռացվեն դեպքերի տարբերվերը, անունները, թվանշանները: Հաճախ ոգտավետ է լինում վոչ միայն թվանշանները գրի առնել, այլ և նրանց հիման վրա կնքվել համապատասխան դիտարամմա՝ ավելի ցայտուն պատկերացնելու իրեն գործը:

Հարկավոր է նույնպե՞ս գրի առնել դուր յեկած մտքերը, արտահայտութունները: Բայց հարկավոր է խուսափել չափազանց յերկար քաղվածներ անելուց, վորովհետև նրանցում հետագայում ավելի հեշտ չէ գլուխ հանելը, քան հենց գրքում: Հարկավոր է գրի առնել միայն ամենամանրամտեղ՝ թեղիտների ձևով՝ պահպանելով մասերի ստորաբաժանումները և այլն: Գրի առնել ոչարդ և ընթեռնելի:

Լայնածավալ տետրակներից, վորոնց մեջ գրքի մի շարք յերեսները արտագրելու համար քիչ ժամանակ չի կորսվել

բայց յեթե ինքը տեսարակի տերընրանցում չի կարողանում գլուխ հանել, շահ չլիա: Մինչդեռ չափազանց ոգտակար են սեղմ, լավ և ընթեանելի գրված տեսարակները, վորոնց ոգնությամբ խկուշյն և յեթ կարելի յե վերջիչել կարողացածը և գլուխ հանել թվական և այլ նման նյութերից: Հարկավոր և սովորել գրի անցնել այդ ձևով, սկզբում ժամանակ չենայելով վարժություններ լրատ, սկսելով կարճ, փոքրիկ հողվածներէց, կամաց—կամաց սովորություն դարձնելով նման անտեսող յեղանակով իր համար նկատողություններ գրի առնելը:

Իհարկե, վորոշ դեպքերում ոգտակար և ավելի լայն քաղվածներ անել: Յեթե գիրքն ունի որինակ առանձնակի հետաքրքրություն և կարևորություն, այն ժամանակ ցալալի չե ժամանակ կորցնել յերկար կոնսպեկտ կազմելու կամ յերկար ցիտատներ ամբողջությամբ արտագրելու վրա:

Այդ հարկավոր ե անել, որինակի համար այն դեպքերում, յերբ ավյալ գիրքը յենթադրվում ե սպտապործել զեկուցման կամ հողված գրելու համար:

Ճիշտ նույն կերպ ոգտակար ե մեծ քաղվածքներ, անել և այն դեպքերում, յերբ վոր քաղվածք անողը դեռ բավականաչափ չի տերապետել գրելու մեխանիզմին, որֆոզրաֆիային կամ գրական լեզվին: Նման դեպքերում քաղվածներ անելը շատ ոգտավետ ե լինում: Յեղ ավելի լավ ե արտագրել այն, ինչ վոր հետաքրքրում ե և կազ ունի կարողացածի հետ. դա ավելի արժեքավոր ե, շան վորեկ ան բան արտագրելը:

Բայց, վորպես կանոն, քաղվածքները ամենից լավ ե անել կարճ, սեղմ և պարզ:

Յեղ այդպես, կարգալու ժամանակ առաջին խնդիրն ե պարզել և յուրացնել կարգացած նյութը: Յերկրորդ խնդիրը՝ խորհել կարգացածի վրա: Յերրորդը՝ կարգացածից, հիշելու համար, անել անհրաժեշտ քաղվածքներ:

Յեղ վերջապես, չորրորդը՝ հաշիվ տալ իրեն ինչ նոր բան ե սովորեցրել կարգացած գիրքը. հաղորդել ե արդյոք վորեկ նոր գիտելիքներ, ինչ չափով են ոգտակար և պետքական այդ գիտելիքները, սովորեցրել ե արդյոք դիտու աշխատանքի, պարագամունքների պայմանների, առնջ ե բերել արդյոք վորեկ նոր մտահղացում, գարթնեցրել ե արդյոք վորեկ առանձնակի ցանկություններ և արամագրություններ:

Այսպիսով մենք գծեցինք գրքի հետ դործ ունենալու ծրագիրը կամ սխեման:

Իհարկե, այս ծրագիրը կարելի յե վորոշ չափով ձևակերպել, մի բն այլ կերպ զնել հարցերը: Մատեմատիկայի, բնագի-

տության և այլն գրքույկների նկատմամբ հաճախ պիտի գործադրվի սխեմայի միայն մի մասը: Կարևոր ե միայն, վոր վորոշակի սխեմա լինի, վորովհետե այդ ժամանակ աշխատանքը արդյունավետ կլինի: Միտեման աշխատանքի մեջ հսկայական նշանակություն ունի:

Հաճախ նա հնարավորություն և տալիս մարդուն տեսնելու այն, ինչ վոր ուրիշները չեն նկատում: Որինակի համար Նապոլյոնը գորքին այցելելիս միշտ ել նկատել ե զինվորի հագուստի ամենաթեթև պակասությունները, մինչդեռ մինչ այդ սպաները մանրակրկետ կերպով փնտրել կյին և չեյին գտել: Բանը նրանումն և, վոր Նապոլյոնը վորոշ սխտեմ ե ունեցել, վորով նա նայել ե վնդերը և հենց այդ սխտեման ե, վոր հնարաբորություն ե ավել նրան նկատել ամենաթեթև բացերը:

Տեսնենք թե ինչպես են մոտենում միևնույն իրին դանազան մասնագետներ: Որինակի համար նկարիչը գիտելով բույսը, նայում ե այն սխտեմայով, վորի մեջ են մտնում գույների գուգակցումը, նրանց պայժաությունը, լուսավորումը, ձևի ներբությունը: Դիտելով բույսը՝ նկարիչը կարող ե բոլորովին ուշադրություն չդարձնել նրա վրա, թե քանի՞ փոշանոթներ կան ծաղկի մեջ և ինչպես են նրանք գասավորված,— այդ հարցը բոլորովին չի մտնում նրա դիտողությունների սխտեմայի մեջ: Ընդհակառակն, բուսաբանը ամենից առաջ ուշադրություն կը դարձնի այդ փոշանոթների վրա, տերեւների գասավորման և այլ նման յերևույթների վրա և կարող ե բոլորովին չնկատել, թե ինչպես ե լուսավորված ավյալ մոմենտում ծաղիկը և ինչպես ե նա աչքի գարնում այս կամ այն ֆոնում:

Ճիշտ նույն կերպ գիրք կարգալու ժամանակ ել գրքին մոտենալու վորոշ սխտեմ ունենալը հսկայական նշանակություն ունի: Նա հնարավորություն և տալիս գրքի մեջ նկատել այն, վորը կարելի յե և չնկատել, յեթե հատուկ նպատակ չզնես հետեկ գործի հենց այդ կողմին: Կամաց—կամաց գրքին մոտենալու այդ ձևը դառնում ե սովորություն:

5. Գրքերից մենք գիտելիքներ ենք վերցնում, ուսումնասիրում այլ մարդկանց փորձը, բայց այդ գիտելիքները ավելի լավ կյուրացվեն մեր կողմից, յեթե մենք ստուգենք նրանց մեր սեփական փորձով: Այլ բան ե յեթե մենք կարդանք գրքույկում «ծովը փոթորկի ամբողջ ժամանակը իրենից մի հրաշալի և հոյակապ տեսարան ե ներկայացնում» և այլ բան, յեթե մենք մեր աչքերով ենք տեսնում այդ պատկերը: Մենք կարգում ենք, որինակ, վոր մեքենան կրճատում ե ժամանակը, բայց միայն

նա կհասկանա այդ փաստի ամբողջ նշանակութիւնը, ով վորջե-
վե աշխատանք կատարել է, սկզբում, ձեռքով և հետո մեքենայով:
Այլ բան է կարգալ գրքի մեջ թե ինչպես է տեղի ունենում
աչքի, ահանջի վորակ ուղեբացիա և բուրբոյիս այլ բան՝ անձամբ
անել այդ:

Ահա թե ինչու «փորձված», դանազան յերկրներում յեղած,
զանազան մարդկանց, զանազան բարքեր և սովորութիւններ
տեսած մարդը հաճախ կյանքն ավելի լավ է հասկանում, քան
մի ուրիշը, վոր գուցե չափազանց շատ բան է բայց կարգացել,
բայց անձնական դիտողութիւնների վոչ մի պաշար չունի:

Մենք հատկապես դնահատում ենք «փորձված» բժշկին,
«փորձված» մանկավարժին, «փորձված» գյուղական տանտերին
և այլն:

Միջին դարերում գոյութիւն ուներ շատ հետաքրքիր և
թրատական մի սովորութիւն:

Աշակերտը փեշակը սովորել վերջացնելուց հետո, նախքան
վարպետ դառնալը, պիտի թափուեր վորոշ ժամանակ, լիներ այլ
քաղաքներում, աշխատեր այնտեղ զանազան վարպետների մոտ
և տեսներ թե ինչպես են ապրում ու աշխատում այլ վայրերում
իր արհեստի ընկերները:

Ահա թե ինչու չափազանց կարևոր է, վորպեսզի ինքնակր-
թությամբ զբաղվողը աշխատի գրքից ձեռք բերած գիտելիքներն
անձնական դիտողութիւնների կամ աշխատանքային վերամշակ-
ման միջոցով ստուգել:

Այս տեսակետից հատուկ նշանակութիւն ունի գյուղատըն-
աեսական, արդշունաբերական մուզեյներ և ցուցահանդեսներ, ո-
րինակելի տնտեսութիւններ և ձեռնարկութիւններ հաճախելը՝
Ամեն տեսակի եկսկուրսիաները լայն կերպով պիտի կիրառվեն:

Հարկավոր է միայն, վոր այդ եկսկուրսիաները գործնական
բնույթ կրեն և չդարձվեն զվարճալի գրոսանքներ:

Եկսկուրսիաների ժամանակ հարկավոր է գրի առնել իր համար
նկատողութիւններ, իսկ ով կարող է և նկարներ, իսկ հետո գրի
առնել սեպհակտն տպավորութիւնները: Հարկավոր է նույնպես
ոգտվել ամեն մի հնարավորութիւնից՝ ճանապարհորդելու, նոր
վայրերում լինելու, նոր մարդկանց ինչպես և նրանց գործն ու
կյանքը տեսնելու համար:

Ամենաառորյա կյանքն անգամ հարուստ նյութ է մատա-
կարարում դիտողութիւնների, ուսումնասիրութիւն համար:

Հարկավոր է միայն հաշիվ տալ իրեն, ինչ ևս ուզում գի-
տել, ինչ նպատակով, և հետո դիտողութիւնները տանել մին-
չև վերջ՝ հանել նրանցից յեզրակացութիւններ:

Այս ամբողջ աշխատանքն ավելի կենդանի կարող է գնալ,
տալ ավելի լավ հետևանքներ, յեթե այդ աշխատանքին լծվի ամ-
բողջ մի կուլեկտիվ: Գործի մասնակիցները պիտի իրենց դիտո-
ղութիւններն իրար հայտնեն: Յուրաքանչյուրն առանձին կեր-
պով է մտածում իրերին. մեկը կնկատի մի կողմը, մյուսը՝ մյուս
կողմը: Հետևանքը կլինի այն, վոր իրը, առարկան բազմակող-
մանի կուսումնասիրվի. կուլեկտիվը հաշիվ յե առնում այն, ինչ
վոր կարող է յին չնկատել անհատ դիտողները:

Պետք է հատուկ մի բրոշյուրով ծրագիր տալ թե ինչպես և
ինչի վրա պիտի տարվեն դիտողութիւնները, ինչպես պիտի գնել
խմբակային աշխատանքը, վորպեսզի նա լավ հետևանքներ տա,
բարձրացնի և վոչ թե իջեցնի իր անդամների աշխատունակու-
թիւնը:

ՊԵՏԲ Ե ՏՆՏԵՍԵԼ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԵՆԵՐԳԻԱՆ

I. «Հարկավոր է տնտեսել ժամանակն ու հնարգիտան» կրկ-
նում են ամեն քայլափոխում գործնական ամբերկացիները:
Նրանք մի ամբողջ գրականութիւն ունեն, դժբախտաբար մեզ,
ուսաստանցիներին քիչ ծանոթ,— վոր բացատրում է թե ինչ-
պես պետք է այս տեսակետով գնել պարապմունքները միջին և
բարձրագույն դպրոցներում, ինչպես պետք է տնտեսել սովորող-
ների ուժերը և նպատակի հասնել ամենակարճ ճանապարհով:
Ամբերկայան յերիտասարդութիւնը լավ է սովորում այդ: Պետք
է սովորենք և մենք:

Այժմ մենք չենք կարող շոայել, իզուր տեղը վատնել մեր
ժամանակն ու ուժերը:

Մենք ապրում ենք հասարակական յերկու սիստեմների
սահմանագծում,— հին կապիտալիստական սիստեման մեռնում է,
ծնվում է նորը՝ կոմունիստականը: Նման ժամանակում չի կարե-
լի ապրել այնպես, ինչպես ապրել են մեր հայրերն ու պապերը:
Յուրաքանչյուր որ բերում է մեզ ինչ վոր նոր բան և այդ նորի
նկատմամբ պիտի ունենալ սեփական աչքեր, սեփական դատո-
նկատմամբ պիտի ունենալ վորոշում: Պետք է գնալ սեփական ուղիով:
Գութիւն, սեփական վորոշում: Պետք է գնալ սեփական ուղիով:
Բայց, վորպեսզի մեր աչքերը տեսնեն, վորպեսզի կարելի լինի
Բայց, վորպեսզի մեր աչքերը տեսնեն, վորպեսզի կարելի լինի
ճշտորեն ընտրել ուղին, հարկավոր է շատ իմանալ: Պիտի իմա-
նա և բանվոր դասակարգը ամբողջությամբ վերցրած, և նրա
յուրաքանչյուր անդամը առանձին—առանձին: Մենք ժամանակ
չունենք առանց շտապելու, մեղկորեն «բազկաթողին տարածված»
աշխատելու:

Պետք է սովորել վորքան կարելի յե տնտեսաբար:

Պատմութիւնը այնպես և հյուսիս, վոր Ռուսաստանը— համեմատաբար հետամնաց մի յերկիր,— առաջինն և բարձրաց- րել սոցիալական հեղափոխութեան դրոշակը և, լավ թե վատ, կարողացել և պաշտպանել այն 5 տարիներէ ընթացքում: Յեթե նա ուզում և հետագայում ել մնալ համաշխարհային սոցիալական հեղափոխութեան հենակետը, նա պիտի ամրապնդի իր նյութա- կան բազան: Յիվ դրա համար նա պիտի նմանացնու անդադար և տենդային կերպով սովորի՝ մեծապես տնտեսելով ժամանակն ու եներգիւնը:

Նույն տնտեսումն և թելադրում բանվոր և գյուղացի յերի- տասարդութեանը նրա կենցաղի բնույթը: Բանվորն ու գյուղա- ցին իրենց ունեցած ժամանակի մեծ մասը զբաղված են աշխա- տանքով: Միայն աղատ ժամանակը նա կարող և նվիրել ինքնա- կրթութեան, իսկ այդ ժամանակը հազիվ-հազ կհերթի:

Յեվ այսպիսով թե ներկա պատմական մոտենալով, թե Ռու- սաստանի առանձնակի դրութիւնը, թե սովորոգների գլխավոր մասսայի կյանքի պայմանները պահանջում են պարագլուխներ- ըրի ժամանակ ժամանակի և եներգիայի խստիվ տնտեսումն պահ- պանել:

2. Ուժերի և եներգիայի այդ տնտեսումն իրագործելու հա- մար անհրաժեշտ և.

ա) ժամանակի ուղիղ բաշխումն.

բ) Աշխատելու համար դնել իրեն ավելի բարենաշոյ պայ- մաններում:

գ) Քրքի հետ պարագելու համար տիրապետել անհրաժեշտ հմտութիւններին:

դ) Պարագլուխների համար նյութի ձիշտ ընտրութիւն անել:

ե) Ճիշտ բաժանել աշխատանքը:

զ) Ուժերի և ժամանակի տնտեսման ահսակետից մշակել կողեկալի աշխատանքի ձևերը:

ը) Իր տրամադրութեան տակ ունենալ անհրաժեշտ ձեռ- նարկներ և ցուցմունքներ:

Ա. Սկսենք ժամանակի բաշխումից:

Յեթե մենք ցանկանում ենք արդյունավետ անցկացնել ժամանակը, պարզ և, վոր մենք պետք և ուղիղ բաշխենք այն: Իսկ ինչպես ենք մենք վատնում այն սովորաբար:

Միայն ծառայութեան ժամանակ և գործարանում ենք մենք աշխատում ժամերով, մնացած ժամանակը անցնում և, ինչպես պատահում և, մեկ տեսար մտով բարեկամը և նրա հետ

կզրուցես, մեկ կրիովես մահճակալին ամենահիմար ոտմանը ձեռ- քիդ, ուշ յերեկոյան կձեռնարկես մի բանի, վոր ժամանակն ի գուր անցնի, կվերցնես վորեք գործնական գիրք, բանից դուրս և գալիս՝ չափից դուրս հոգնել ես, ստիպված ես քունդ փախ- ցնել ծխելով, գիրքդ մի կողմն և ընկնում, սկսում ես զրուցել ընկերոջ հետ և վիճում համարյա թե մինչև առավոտ: Իսկ ա- ռավոտյան դժվարութեամբ արթնանում ես, զգում ես քեզ ջար- դելված:

Սվերդլովի համալսարանի աշխատանքների հաշվետվութեան մեջ նկարագրվում և, թե ինչպես Սվերդլովի համալսարանի ու- սանողը ամբողջ գիշերը ընկերոջ հետ վիճելով այն մասին, թե ինչ և արժեքը, առավոտյան դուրս և վաղում փողոց, բռնում առաջին անցնողի թեից և հարցնում. «Իսկ դուք ընկեր, ինչպես եք վորոշում արժեքը»:

Այդ ի հարկի, զվարճալի չե, նույն իսկ հուզիչ, բայց մտա- ծել և տալիս. միթե վոչ վոք չի հասկացրել այդ խեղճին, վոր նա իդուր և վատնում իր ժամանակն ու եներգիան և յեթե պիտի շարունակի հետագայում ևս այդպես կյանք վարել, պիտի ընկնի գժանոց կամ սանատորիա և նրանից հեղափոխութեանը և Խորհրդային Հանրապետութեանը կշահվի շատ քիչ:

Ժամանակ վատնելու յեղանակներին մեկն ել ամեն տեսա- կի ժողովների անչափավոր հաճախումն և: Ի հարկի մի շարք գործնական ժողովներ անհրաժեշտ և հաճախել, բայց, չպիտի զբաղվել աշխատանքի հենց այդ ձևով:

Ժողովը շատ լավ և կարեւոր բան և, բայց այն ժամանակ, յերը նա տարվում և աշխուժ, յերը հետորները չեն կրկնվում, խոսում են ըստ ելութեան և յերը վոր ժողովը տարվում և ճիշտ և կարող:

Սովորաբար, չափազանց շատ ժողովներ հաճախելուց հետո մնում և միայն այն գիտակցութեանը, վոր ժամանակը կզրուս- վել և: Իսկ ինչքան ժամանակ և վատնվում հավաքույթների համար: Միզ մոտ սովորութեան և դարձել ուշանալ կես, մի և ավելի ժամերով: Ժամանակն անցնում և ամենամանարդյունավետ դրադմունքների մեջ, անհամ խոսակցութեանների, ծխելու, փո- ղոցների չափնչփեյու և այն: Այդպես փատնել ժամանակը կարող են թույլ տալ իրենց միայն աղնվականների վորդիները, վորոնք վոչինչ չեն անում և զրա համար ել անցավ վատնում են ժամա- նակը: Ազնվական այդ սովորութեանը խոր ար- մատներ և ձգել ուսական բարքերում: Պետք և այդ մոտա- ցութեան տար նայեցեք, որինակի համար, թե ինչպես և աշխա-

տում Տրոցկին կամ Լենինը: Միթե նրանք ժամանակ են կորցնում սպասումների համար: Նրանց նշանակած գործնական տեսակցութունները սկսվում են ճիշտ ժամանակին, ժողկոմների Խորհուրդը հավաքվում է ճիշտ նշանակված բողոքին:

Ուարչերկրացիները ավելի լավ գիտեն ժամանակի գինը: Գիտնականները, գրականագետները, պրոֆեսորները սովորություն ունեն շատ պակեղու, վաղ վեր կենալու և առավոտները թարմ ուղեղով աշխատելու, նրանք շատ քիչ են հաճախում իրար մոտ, նրանց ժամանակը խստիվ բաժանված է:

Նրանց մոտ մեկ ընդմիջտ վորոշված են վեր կենալու, աշխատանքի, ճաշի, հանգստություն և քնի ժամերը: Աշխատանակությունը դրանից չափազանց մեծանում է, մեծանում և պակասվում է:

Հետաքրքիր է ծանոթանալ թե ինչպես են բաժանել իրենց ժամանակը խոշոր գիտնականները, գրողները: Որինակի համար վերցնենք Լև Տոլստոյին: Նա գրել է վեպեր, պատմվածքներ, վոր կթվալին թե ամբողջապես բխված են տրամադրությունից, մինչդեռ նրա ժամանակը խստիվ սահմանված է յեղել. առավոտները նա գրում էր՝ լարված աշխատելով և մի քանի անգամ միևնույն գրվածքը բարեփոխելով: Գրողը չի կարող առանձնացված ապրել, նա պիտի միշտ մարդիկ տեսնի, դիտի նրանց, ուսումնասիրի: Յեվ Լ. Տոլստոյը վորոշ ժամեր հատկացրած ուներ մարդկանց հետ շփվելու համար: Հետո նա ժամեր է հատկացրել կարդալու և այլ բաների համար: Լ. Տոլստոյի կյանքի այդ կողմը լավ նկարագրված է Սերգեյենկոյի «Ինչպես է ապրում և աշխատում Լ. Ն. Տոլստոյը» գրքույկում:

Ճիշտ այդպես է աշխատել և Ֆրանսիական վիպագիր Ջյուլան, վոր գրել է վեպերի մի հսկայական սերիա, վորոնք բնութագրում են հասարակության զանազան խավերի կյանքը կապիտալիզմի ժամանակ: Ջյուլան վեր եր կենում առավոտյան ժամը վեցին և գրում էր ինչպես և Տոլստոյը առավոտները, մնացած ժամանակը կորցնելով հասարակության այն խավերի ուսումնասիրության վրա, վորոնց նա նկարագրում էր:

Վերջերք մեծ յերաժիշտներից, որինակ Բեթհովենի կյանքի նկարագրերը և դուք կտեսնեք, թե ինչքան շատ ժամանակ է նա կորցրել դաշնամուրի վրա նվագելուն, և վորքան խստորեն է սահմանել նա իր ժամանակը:

Ավելի խստիվ են բաժանում իրենց աշխատանքը բնագետները, բժիշկները, գիտնականները, վորոնք աշխատում են միկրոսկոպներով՝ լաբորատորիայում, դիախատարտում:

կարդացեք, որինակ, Եդիսոնի, Լուի Պաստյուրի և մաթի հայտնի այլ աշխատավորների աշխատանքների մասին:

Հայտնի անդամահատ կոխերը, ծերության ժամանակ նույնիսկ ամենախստիվ կերպով սահմանել է իր որը, ճիշտ բողոքին պակեղել է քնելու, ամեն որ վորոշ ժամանակ թաղացել է լաուստենիսս՝ պահպանելու համար ձեռքի ամրությունը ուղեբացիաների ժամանակ և այլն:

Յեվ նման որինակներ դուք կգտնեք հազարներով: Նա, ով ցանկանում է հասնել խոշոր արդյունքների, պարտավոր է ամենամանրակրկիտ ձևով խնայել և սահմանել իր ժամանակը:

Բ) Յերկրորդ անհրաժեշտ պայմանը նրա համար, վորպեսզի աշխատանքը ուղիղ տարվի, վորպեսզի ավելորդ ժամանակ և եներգիա չվատնվի, դա աշխատանքի համար հնարավոր բարեհաջող պայմաններ ունենալն է:

Ամենակարևոր պայմանը—ուղեղի թարմությունն է, հոգնածություն լացակայությունը: Հոգնած մտղը աշխատում է և չափազանց դանդաղ, և ավելի վատ: Ամենալավ ժամերը անկասկած, առավոտյան ժամերն են: Նորմալ մարդը առավոտյան ամենից լավ է աշխատում: Ի հարկե, յեթե պետք է առավոտյան շատ վաղ դուրս գալ գործի, դժվար է պարապմունքներ կազմակերպել առավոտյան ժամերին, իսկ յեթե գործն սկսվում է ժամը 10—11-ին, առավոտյան ժամերը անպայմանորեն պիտի ոգտագործել: Հաճախ գրան խանգարում է ուշ քնելը, բայց այդ դեպքում պիտի աշխատել իրերի նման կարգը փոխել: Յերեկոյան պարապմունքները հոգնեցուցիչ են. քունը փախցնելու համար մարդ դիմում է մուգ թեյին, ծխելուն, վեձերին, և հետևանքը լինում է այն, վոր արագորեն հոգնում է և աշխատունակությունը նվազվում:

Մյուս պայմանը—մաքուր մթնոլորտում աշխատելն է: Գլխի և ուղեղի ուզիղ և յեռանդուն գործելու համար հարկավոր է, վոր ուղիղ և հավասարաչափ գործի և սիրտը, իսկ դրա համար հարկանց հեղձուցիչ և տաք լինի: Պարապմունքից առաջ անհրաժեշտ է բանալ պատուհանը և թարմացնել ողը: Շատ ծխած կամ ամթա-հոտով լի սենյակը չափազանց բացասական ազդեցություն է ունենում պարապմունքների վրա:

Բարեհաջող պայման է ներկայանում նաև աշխատանքի ժամանակ ուշք զրավող տպավորությունների բացակայությունը: Չի կարելի զբաղվել, յերբ շուրջդ աղմկում, խոսում են, յերբ ամեն բողե դիմում են քեզ վորևե, թեև փոքր նշանակություն

ունեցող, հարցերով: Անհրաժեշտ է սովորել հաղթելու ուրիշի հանգստութիւնը, և չաղմկել, չսուրել, չխոսել, չերբ մի ուրիշը պարապում և: Բայց մեծ մասամբ բանվորի ու գյուղացու բնակարանային պայմանները այնպես են, վոր նանը նրա համար դժվար է աշխատելը: Ահա թէ ինչու հարկավոր է վարժեցնել ինքն իրեն պարապելու գրադարանում կամ սկումբում: Գրադարանը թերեցարաններից ոգովելը մեզ մոտ ավելի քիչ է տարածված քան Արևմուտքում և հատկապես Ամերիկայում: Մեղանում առաջ կարգացել և գործ են ունեցել զբքի հետ սովորարար հասարակութեան այն դասակարգերը, վորոնց բնակարանային պայմանները թույլատրել են նրանց և տանը պարապելու: Իսկ նրանք, վորոնք չեն կարողացել տանը պարապել, ընդհանրապես չեն պարապել: Այժմ, չերբ զբքից ոգովել են միսել և աշխատավորները, գրադարանը առանձնակի կարևոր նշանակութիւն է ստանում: Գրադարանում վոչ վոք չի խանգարում պարապելու: Բացի գրանից գրադարանում կան ձեռքի տակ ենցիկլոպեդիկ բառարաններ, տեղեկատուներ, ատլասներ, դասագրքեր, վորոնցից միշտ էլ կարիք է լինում ոգովելու վորեւ քիչ թէ շատ լուրջ գիրք կարդալու ժամանակ:

Ճիշտ է, չերբեմն մարդ կարող է պարապել մեծ աղմուկի և շփոթութեան ժամանակ, բայց դրա համար անհրաժեշտ է վերջուպի գիրքը կամ աշխատանքը այն աստիճան գրավի նրան, վոր նա կարողանա չնկատել շրջապատողներին: Պատմում են, վոր հուշն գիտնական հուշակավոր չերկրաչափ Արխիմեդը այնպես է գրավված յեղել իր գծելու աշխատանքով, վոր չերբ նրա տունն է մտել թշնամին և նրան մոտեցել է մի զինվոր, նա ասել է միայն. «ձեռ մի տուր իմ շրջաններին»: Վոչ բոլորը և վոչ միշտ կարող են ամբողջապես կլանվել ուսումնասիրութեան ատարկայով, վոր չնկատեն շրջապատը, և դրա համար շատ ավելի լավ է, չեթէ արտաքին վոչ մի հանգամանք զբաղվողի ուշադրութիւնը չի գրավում: Պարապմունքների հաջողութեան համար անհրաժեշտ է նույնպես, վոր կողմնակի մտածողութիւնները չխանգարեն և դուրս չկա այնպես, ինչպես Յեվգինիյ Մեդգինի հետ է յեղել վորի մասին Պուշկինը գրել է

«Չնայած աչքերը տեսնում էյին,
Բայց մտքերը թռչում էյին հեռուն:»

Ահա թէ ինչու, ի միջի այլոց, ավելի լավ է պարապել առավոտները: Անցած որվա տպավորութիւնները գիշերվա ընթացքում մի քիչ թուլանում են, նոր տպավորութիւններ գեռ չկան, և վոչինչ չի խանգարում գեռ հոգեկան հանգստութիւնը:

Յեթե չկա հարկավոր հանգստութիւն և պարապելու համար անհրաժեշտ արամադրութիւն պիտի աշխատել առաջ բերել այդպիսին. արագ գնալ-գալ սենյակում, սուրկ վորոշ մոտիվ, վորոշ հիշողութիւն առաջ բերել իր մեջ, սիրած հեղինակից կարդալ մի չերկու չերես, կամ թէ չէ նման վորեւ միջոցի գիմել:

գ) Վորպեսզի աշխատանքը հաջող գնա անհրաժեշտ է տիրապետել նույնպես վորոշ հմտութիւնների, վարժութիւնների, առանց վորի չի կարելի գործ ունենալ գրքի հետ:

Նման հմտութիւնների թվին են պատկանում կարգալգրել կարողանալը, թվական տվյալների հետ գործ ունենալ, կարգալ աշխարհագրական քարտեզը և այլն:

Պետք է սովորութիւն դարձնել արագ և շատ կարգալ ինքն իրեն, սեղմ, գործնական նկատողութիւններ գրի առնել, մոտենալ գրքին վորոշ պահանջներով: Ինչ՞ու համար պետք է զարգացնել իր մեջ այդ սովորութիւնները: Նրա համար, վորպեսզի կարողանանք աշխատել առանց ժամանակի ու եներգիայի ավելորդ վատնումի:

Սովորութիւնը ազատում է միաքը մտածելու համար: Կենդանիներ շարժումների մեծ մասը ավտոմատիկ է: Մարդը ծնվում է ներվային կենտրոններում ավտոմատիկ շարժումների համար առանց պատրաստի հարմարութիւնների: Բայց չափահաս մարդը այնքան շատ ավտոմատիկ հարմարութիւններ ունի, վոր նրանց մեծ մասը պետք է վոր մշակված լիներ ծանր աշխատանքի միջոցով: Յեթե մեր գործողութիւնները վարժութիւններից չկատարելագործվեյին, իսկ սովորութիւնը չկրճատեր ներվային և մկանային եներգիայի վատնումը, այն ժամանակ մարդու գրութիւնը չափազանց վողբալի կլիներ: Ահա թէ ինչ է ասում այս առթիվ Մաուդսլին:

«Յեթե գործողութիւնները չհեշտանային նույն գործողութեան կրկնումով, հարկ լիներ նորից և նորից գիտակցութիւնը ուշադրութեամբ զեկավարել, հավանորեն, այն ժամանակ վոչ մի պրոգրես հնարավոր չեր լինի և մեր ամբողջ կենցաղային գործունեութիւնը կսահմանափակվեր մեկ, չերկու գործողութիւններով:

Նման պայմաններում մարդը կարող էր ամբողջ գրերով հագնվել և հանվել՝ կենտրոնացնելով դրա վրա իր ամբողջ ուշադրութիւնն ու եներգիան, լվանալ ձեռները կամ կոճկվել՝ նրա համար ամեն մի առանձին դեպքում նույնպես դժվար կլիներ, ինչպես չերխայի համար դժվար է լինում այդ անել առաջին անգամ: Վերջիվերջո նա կուժասպասվեր մի շարք անուժ վոր-

ձերից հետո... Այն ժամանակ, յերբ յերկրորդ անգամվա ավտոմատիկ գործողութիւնները ուղեկցվում են համեմատաբար փոքր հոգնածութեամբ, այդ դեպքում մոտենալով որգանական կամ առաջին ավտոմատիկ շարժումներին կամքի գիտակցական ջանքերը արագորեն հոգնեցնում են մեզ: Մենք գիտենք թե ինչ զժվարութեամբ ե, որինակի համար, սովորում անգրագետ չափահասը տառեր ձուլել կամ թե ինչպես զժվար ե լինում քիչ զբաղեա մարդու համար ստորագրելու իր ազգանունը, ինչքան յերկար ե նա հարմարվում ե ինչ ջանքեր ե թափում հաճախ այն գրելու համար: Յերբեմն այդ ջանքերից նրա դեմքը ծածկվում ե քրտինքով: Պարզ բան ե, քանի վոր այդ պրոցեսները կլանում են ամբողջ նրա ուշադրութիւնը, նա չի կարող կենտրոնանալ կարգալիքի մտքի վրա: Ահա թե ինչու պետք ե զարգացնել իր մեջ վորոշ վարժութիւններ, դարձնել նրանց ավտոմատիկ: Առանց այդ անհնարին են լուրջ պարագմունքները:

դ) Թե ինչ գեր ե խաղում ժամանակի ե եներգիալի տնտեսման տեսակետից նյութի ընտրութիւնը՝ մենք արդեն այդ մասին ասացինք վերևում: Այստեղ անհրաժեշտ ե միայն մի քանի խոսքերով կրկնել արդեն ասվածը:

Անհրաժեշտ ե ձեռնարկել միայն ուժերը ներսծ աշխատանքի, պետք ե ձեռք առնել այնպիսի գրքեր, վորոնք գոնե քիչ թե շատ մատչելի յեն իրենց լեզվով, ձեռք չախտի առնել այն գրքերը, վորոնք պահանջում են բավական մեծ պտորասաւթյան, իսկ յեթե գիրքը անհրաժեշտ ե կարգալ, այն ժամանակ առաջուց պետք ե անհրաժեշտ գիտելիքների տիրապետել:

Ձեռք առնել ուժերից վեր զարգացողութիւն պահանջող գիրք, նշանակում ե իզուր տեղը վատնել ուժերը ե սպանել ժամանակը:

Մարդկային գիտելիքների անպարփակ ամբողջ մասսայից պետք ե ընտրել միայն այն, վորը ունի առանձնակի կարևոր նշանակութիւն, վորը անհրաժեշտ ե շրջապատի իրականունութիւնը հասկանալու ե այն կարողանալու վերակազմակերպել: Կարևոր նշանակութիւն չունեցող զանազան գիտելիքներ ձեռք բերելու համար բանվորն ու գյուղացին հնարավորութիւն չունեն ժամանակ ե եներգիա վատնելու:

Իհարկե, պետք ե ընտրել ուսումնասիրելիք հարցերի շուրջը յեղած ամենալավ գրքերը, վորոնք տվյալ հարցը ավելի լիակատար, փորը ե ուղից են լուսարանում: Յեվ վերջապես, պետք ե սկսել կարգալ ամենահետաքրքրող հարցից՝ կամաց-կամաց ընդլայնելով ուսումնասիրելիք շրջանը՝ ընդգրկելով սահմանակից

կարևոր շրջանները, ե այդպիսով կազմակերպելով բոլոր նոր ձեռք բերած գիտելիքները հիմնական միջուկի շուրջը:

ե) Պետք ե նույնպես սովորել կարողանալ աշխատել վորոշ, առաջուց դժած ծրագրով: Պարագմունքներում քիչ փորձված մարդը սովորաբար շատ ե ցրվում, ձեռք ե առնում մերթ այս, մերթ այն գիրքը՝ լավ չյուրացնելով մի թեման, անցնում ե մյուսին: Պարագմունքների նման յեղանակը շատ քիչ արդյունավետ ե լինում ե շատ անտեսես: Ձպետք ե այս-այն կողմը ընկնել, այլ հետապնդել վորոշ նպատակի, ըստ վորում նպատակները չախտի լինեն վոչ առաձգական ե լայն, այլ շատ կոնկրետ, վորոշակի: Յենթադրենք մեկը ցանկանում ե ուսումնասիրել կապիտալիզմը: Այդ շատ լայն նպատակ ե ե շատ անորոշ: Հասնելու համար դրան, պետք ե այդ ընդհանուր թեման բաժանել մի շարք ավելի սահմանափակ թեմաների: Նրանցից ընտրել մեկը, ասենք, ժամանակակից կապիտալիզմը: Հետո հարկավոր ե սահմանափակել ե այդ թեման: Որվնակի համար, սկսել ուսումնասիրել ժամանակակից կապիտալիզմը մի վորեւ յերկրում, յենթադրենք, Անգլիայում: Հետո, ել ավելի հեռու դնալ սահմանափակման ուղիով ե ընտրել զիցուք բանվոր դասակարգի դրութեան ուսումնասիրումը Անգլիայում ժամանակակից կապիտալիզմի պայմաններում: Միայն կոնկրետ կերպով զբված, տվյալ թեման վերջացնելով կարելի յե անցնել հետեյալ, մոտիկ, կոնկրետ թեմային ե ելի յուրացնելով այն, ցանցնել առաջ: Սա ամենատնտեսելի յեղանակն ե յուրացնելու համար բավական խորը ընդհանուր թեման:

Իհարկե, նման ծրագիր կազմել կարողանալու համար, պետք ե ունենալ արդեն վորոշ, չնայած ե ամենաընդհանրական պատկերացում ամբողջ թեմայի մասին: Ամերիկյան հայտնի ինժեներ Տեյլորը խոսելով աշխատանքի կազմարեքման մասին մատնանշում ե, վոր յուրաքանչյուր ծառայողի, յուրաքանչյուր բանվորի պիտի տալ վորոշ կոնկրետ պատվերներ: Վորքան քիչ ե զարգացած, վորքան քիչ գիտե մարդը, այնքան քիչ բարդ ե ավելի մոտիկ նպատակներ պիտի դնել նրա առաջ, գրում ե Տեյլորը: Վոչ մի ուսուցիչ չի համարձակվի տասը տարեկան յերեկան յերեխային տալ ուսումնասիրելու այս ինչ հարցը, ծանոթանալ այն ինչ գրքի հետ: Նա կտա նրան շատ ավելի հեշտ խնդիր. կարգալ այս ինչ յերեսում այս ինչ բանաստեղծութիւնը, այս ինչ պատմվածքը:

Իսասպիւրքը նվաճվում ե մաս-մաս: Տեյլորի այդ նկատողութիւնը միանգամայն ճիշտ ե. գրքի հետ առաջին անգամ

գործ ունեցողը պիտի իրեն առաջ դնի ամենամոտիկ, վոչ բարդ և իր ուժերը ներող հետևանքներ:

Նոր սովորողի համար ծրագիրը կազմելը բավական դժվարին գործ է, վորովհետև նա պարզ չի պատկերացնում իրեն այն նյութի ծավալը, վորը պիտի ուսումնասիրեն և ընդհանուր թեմայի առանձին բաղկացուցիչ մասերը: Այդտեղ նոր սովորողին ոգնութեան պիտի գան ընդհանուր թեմային ավելի մոտ ծանոթ ընկերները կամ համապատասխան ձեռնարկներն և ոժտնդակիչ դրքերը: Այդ կողմից զանազան դասնթացքների ուսանողները դանդաղ են ավելի բարեհաջող պայմաններում, նրանք ինչպես ասում են գյուղացիները, «ապրում են ուրիշների մտածածով»: Աշխատանքի ծրագիրը նրանց համար կազմում են դասընթացքների ղեկավարները: Դա, ի հարկե, ավելի պարզ և սկզբում վորոշ չափով շահավետ է պարապել սկսողի համար. նա սիսկ չի անում գնալու սխալ ճանապարհով: Մինչդեռ, յերբ ինքն իրեն թողնված կարգացողը վորոշ սովորութիւնն է ձեռք բերում իր համար ծրագիրը կազմելու, նա ավելի շահավետ գրութեան մեջ կլինի, քան դասընթացք չսողը, վորովհետև կկարողանա իրեն համար, ավելի անհատականացրած ծրագիր մշակել, վորը միանգամայն կհամապատասխանի նրա ուժերի և գիտական պաշարի աստիճանին:

դ) Կանգ առնենք նույնպես և հետևյալ հարցի վրա: Ի՞նչպես կարելի յի ավելի տնտեսաբար պարապել, մենակ թե խմբակով: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես են դրված պարագմունքները խմբակում: Յեթե խմբակի անդամները բարեխրդաբար են վերաբերվում պարագմունքներին, հաճախում են ժամանակին, կատարում են իրենց վրա վերցրած բոլոր պարտականութիւնները և մանավանդ յիթե խմբակում փորձված գեղավար կա,—պարագմունքները խմբակում ավելի տնտեսված կլինեն: Կողեկտիվ աշխատանքը կարող է ժամանակ շահել: Պետք է աշխատանքի բաժանում մտցնել, աշխատանքը մաս-մասով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անդամի ուժերը, կարծիքների մշտական փոխանակումը ոգնում է մեծամասնութեանը պարզել իր համար ամեն անհատականին, վոչ պարզը: Իսկուսիաները հետաքրքրութիւնը բարձրացնում են դեպի պարագմունքները, մաքին նոր թափ են տալիս: Բացի դրանից, կողեկտիվ աշխատանքը շատ լարում, պարագմունքներին վորոշ կայունութիւնն է տալիս: Այս ամենը ստիպում է չափազանց գնահատել խմբակային աշխատանքները, բայց, իհարկե, այն պայմանով, վորի մասին ասվեց վերևում: Իսկ յիթե խմբակի անդամները ուշանում են, բաց են

թողնում, յիթե նրանք տանը տրված նյութերը չեն մշակում և սահմանափակվում են միայն խմբակում ունեցած խոսակցութիւններով, խոսակցութիւններ, վորոնց հետևը վոչ մի լուրջ, ինքնուրույն աշխատանք չկա, այն ժամանակ աշխատի խմբակից ավելի լավ է դուրս գալ և աշխատել մենակ:

թ) Աշխատանքը խմբակի կամ առանձին անհատի կողմից տարվելու ժամանակ, նրա համար, վորպեսզի այդ աշխատանքը տարվի առանց ավելորդ ժամանակ և եներգիտ վատնելու, անհրաժեշտ է, վոր նրանց տրամադրութեան տակ լինի մի ամբողջ շարք անհրաժեշտ ձեռնարկներ և ցուցմունքներ, վորոնք ոգնելին աշխատանքը դնելու ուղիղ բեյսերի վրա: Այդպիսի ձեռնարկներ մեղանում՝ Ռուսաստանում համարյա թե բոլորովին չեն յեղել, իսկ յեղածներն էլ համարյա թե բոլորը հնացել են: Պետք է մի շարք ձեռնարկներ ստեղծել՝ ինքնակրթութեան ոժտնդակելու համար: Ի հարկե, դա մի սրվա գործ չէ: Գլխադրուսվարը հրատարակել է մի չափազանց կարևոր ձեռնարկ նրանց համար, ովքեր պարապում են ինքնակրթութեամբ «Հանրամատչելի քաղաքական բառարան»: Բայց դա միայն առաջին քայլն է, վոր աբել է պետութիւնը սովորողներին: Անհրաժեշտ է նույնպես ունենալ հանրամատչելի ենցիկլոպեդիկ բառարան, վոչ թե բազմահատոր, այլ վոչ մեծ, ինչպես Կարուսի. շատ հանրամատչելի Ֆրանսիական ենցիկլոպեդիկ բառարանն է: Անհրաժեշտ է ունենալ կարգալու համար ամենակարևոր դրքերի հանձնարարական կատալոգ, բայց ցուցմունքներով՝ թե ի՞նչ է տալիս յուրաքանչյուր գիրքը, ի՞նչ պարաստութիւնն պիտի ունենալ այն կարգալու և այլն:

Անհրաժեշտ է ունենալ պարագմունքների ծրագրերի հավաքածու, ուր կմտնեն պարագմունքների մի շարք ծրագրեր՝ գիտելիքների զանազան բնագավառների վերաբերյալ՝ մշակված գաղափարն պատրաստութիւնն ունեցող անձնավորութիւնների համար: Պետք է հրատարակել մի շարք ձեռնարկներ՝ գիտելիքների կարևորագույն շրջանները ուսումնասիրելու համար, ձեռնարկներ, վոր լայն տեղ պիտի ասն ինքնուրույն պարագմունքներին և մի շարք ցուցմունքներ կտան՝ թե ինչպես ինքնուրույն կերպով աշխատել այս կամ այն հարցի վրա: Պետք է ունենալ «Սորկուս-գպրոցի կուրսանտի ուղեկից»-ը իր վարկացիաներով՝ «Յերիտասարդ գյուղացու ուղեկից», «Յերիտասարդ բանվորի ուղեկից», մի շարք ցուցմունքներ, ատլասներ և այլն: Այդ ձեռնարկների ներկայութիւնը իրենց ինքնակրթութեան վրա աշխատողների պարագմունքները կդարձնեն ել ավելի հեշտ և արդյունավոր:

ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՏԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆԸ

1. Մեզ մնում է սահլու միայն մի քանի խոսք: Ի նկատի ունենալով նույն հատուկ դերը, վոր սովյայ ժամանակում Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. սահմաններում խաղում է ինքնակրթությունը, պետությունը և կուսակցությունը պիտի հատուկ ուշադրություն դարձնեն գործի այդ կողմին՝ աշխատելով այդ գործը դնել պատշաճ բարձրության վրա և տալ նրան ամեն տեսակի ոժանդակություն:

2. Այդ ոժանդակությունը պիտի արտահայտվի ինքնուրույն պարասպաններին համար ամեն տեսակի ձևափոխումների հրատարակությամբ: Այդ ձևափոխումներից մի քանիները անվանվեցին վերևում, բայց դա միայն նրանց աննշան մասն է: Կարևոր է ստեղծել ձևափոխումների նոր տիպեր, վորոնք հաշվի առած կլինեն Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. մեջ ինքնակրթության պայմանները: Այդ աշխատանքի համար չի կարելի խնայել վոչ ուժ և վոչ էլ միջոց: Այդ խնդիրը Գլխավորապես պիտի դնի առաջին հերթին, այդ աշխատանքին պիտի մղվեն մեղսաբանների և կուսակցական աշխատակիցների կողմերը: Այժմ հարցը նրանում չէ, վորպեսզի համոզենք մարդկանց թե հարկավոր է սովորել, հարցը նրանումն է, վորպեսզի ծանոթացնենք նրանց այն բանի հետ, թե ի՞նչ է ի՞նչպես պետք է սովորել:

Գլխավորապես վորոշ գումարներ և ստանում իր հրատարակությունների վորոշ տեսակները եժանացնելու համար: Այդ գումարները ամենից առաջ պիտի դնան ինքնակրթության մասին հրատարակված ձևափոխումների կժանացման գործին: Բայց վորքան եժան լինեն այդ ձևափոխումները, նրանք շատերին անհայտ կմնան և մատչելի չեն լինի: Այդ ձևափոխումների տարածման գործում պիտի ոգնություն գան գլխավորապես: Ինչքան բարձր հիմքերի վրա դրվի մեզ մոտ՝ Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. մեջ գրագրանային գործը, այնքան ավելի մատչելի կդառնան այդ ձևափոխումները մասսային, վորը ցանկանում է պարագել ինքնակրթությամբ: Գրագրանայնապես մի շարք հնարավորություններ ունի տեղյակ պահելու կարգացողին այս կամ այն ձևափոխում գոյություն մասին, բացատրելու ինչու յի նա պետք է ինչպես նրանից ստույգ: Շարժական պուլսները, խրճիթ—ընթերցարանները կարող են մոտեցնել այդ ձևափոխումները մասսային: Գործի այդ կողմի վրա պետք է պատշաճ ուշադրություն դարձնել:

3. Գլխավորապես ձրագրա-գրախոսական բաժնին կլից գոյություն ունի ինքնակրթության յինթաբաժին: Սակայն նրա

գոյություն մասին անգամ շատ քչերը գիտեն: Այդ յինթաբաժինը պետք է ամենալայնագույն կերպով զարգացնի իր գործը, դառնա ինքնակրթության Բյուրո՝, վորի աշխատանքը կերևար, բոլորին հայտնի կլինի: Բյուրոն հոգ պիտի տանի տեղեկացնելու մամուլին հրատարակությունների մասին, գրավելու այդ գործին կուսակցական և հասարակական ուշադրությունը: ինքնակրթության Բյուրոն՝ պիտի լավ հիմքերի վրա դնի կոնսուլտացիան, վորի բաժանմունքները պիտի ցրված լինեն Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. ամբողջ տերիտորիայում: Վորտեղից վերցնել դրա համար փող: Գործ լինի, փող կգտնվի: Հարկավոր է կրճատել մի քանի բյուրոկրատիկ ապարատներ, վորոնք չափից ավելի շատացել յեն և ի հաշիվ նրանց դնել ինքնակրթության ոգնություն կենդանի գործը, վոր այժմ այնքան կարևոր նշանակություն ունի:



22

11
10571

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

